Ազգ
Azg
17 ապրիլ 2010 շաբաթ 69 (4449)
ISSN: 1829-1651
9 771829 165003 10006

# Ադրբեջանցիները հայերի են սպանել Լենինգրադի մարզում

Ռուսական «Կոնկրետնո.ռու» կայքի փոխանցմամբ՝ Լենինգրադի մարզի Վսեվոլոժսկի շրջանում բացահայտվել է նախկինում կատարված կրկնակի սպանություն:

«Ոստիկաններին հաջողվել է պարզել, որ սպանվածները՝ տղամարդ եւ կին, Հայաստանի քաղաքացիներ են, իսկ մարդասպանները՝ ադրբեջանցիներ», հաղորդում է կայքը՝ հավելելով, որ ոստիկաններին բավական «օգնել» են մարդասպան-ադրբեջանցիները՝ ինքնակամ ներկայանալով ոստիկանություն եւ ցույց տալով այն տեղը, որտեղ թաղել էին զոհերին:

# Նախքան Հայաստանի սահմանի բացումը Թուրքիան սփյուռքի առջեւ բացում է իր ներկայացուցչությունների դռները

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Ապրիլի 16-ին վերադառնալով Վաշինգտոնից, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն կազմակերպել է մամուլի ասուլիս, որտեղ նշել է, որ ինքը ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի եւ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ կարեւոր հանդիպում է ունեցել, նա վերստին կրկնել է «Թուրքիայի անկեղծ հավատարմությունը հայկական կողմի հետ ստորագրված արձանագրություններին», անընդունելի է համարել Իրանի դեմ ամերիկյան նոր պատժամիջոցների կիրառումը, ապա եւ ընդգծել է. «Իրականում միջուկային անվտանգության գագաթաժողովին պետք է ներկա գտնվեր նաեւ Ադրբեջանը, որը չհրավիրվեց»:

Վերջում Դավութօղլուն, ինչպես կայքէջում նշում է թուրքական հանրային հեռուստատեսությունը, լրագրողներին ասել է, որ վաշինգտոնյան հանդիպումների մասին Բաքվին եւ Թեհրանին իրազեկելու համար ուղեւորվելու է Ադրբեջան ու Իրան:

Նախքան Անկարա վերադառնալը՝ ապրիլի 15-ին Վաշինգտոնում դիվանագետների խորհրդակցություն է հրավիրել, որին մասնակցել են Կանադայում եւ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանները, ինչպես նաեւ Տորոնտոյում, Հյուսթոնում, Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Չիկագոյում եւ Բոստոնում Թուրքիայի գլխավոր հյուպատոսները: Խորհրդակցությանը քննարկման է դրվել ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված Հայոց ցեղասպանության օրինագիծը:

Գլխավոր հյուպատոսները նախարար Դավութօղլուին ասել են, որ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացը սկսել է չափազանց դրական արդյունքներ տալ, դրա հետեւանքով ներքին հուզումներ են առաջացել հայկական սփյուռքում: Միաժամանակ նշվել է, որ ցեղասպանության օրինագիծն ընդունելու Ներկայացուցիչների պալատի հանձնաժողովի որոշումը վնաս է պատճառել Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացին եւ բարդացրել է կողմերի երկխոսությունը:

Տես էջ 3

ԱՆՀՈՒՍԱԼԻ՞ ՔՆՆԱՐԿՈՒՄ

# Ապրիլի 28-ին Իսրայելի խորհրդարանը կքննարկի Հայոց ցեղասպանության հարցը

**Izrus.co.il-ի տեղեկացմամբ՝ Իսրայելի «Մերեց» խորհրդարանական խմբակցության նախագահ Հայիմ Օրոնը ապրիլին Քնեսեթում քննարկման կդնի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:**

**Քանի որ ապրիլի 24-ը շաբաթ է, Օրոնը մտադիր է Ցեղասպանության թեմայի քննարկմամբ զբաղվել ապրիլի 28-ին՝ խորհրդարանական արձակուրդից հետո: «Մտադիր չեմ կատակերգություն... Կապի մեջ եմ հայկական կազմակերպությունների հետ, բայց այս տարի կառավարությունը Հայոց ցեղասպանության հարցն ավելի շուտ կքաղի, քան նախորդ անգամ: Այժմ բանակցային գործընթաց է Երեւանի եւ Անկարայի միջեւ, եւ շատերը խորհուրդ են տալիս չմիջամտել, չխանգարել նրանց: Ես կապ չեմ տեսնում 95-ամյա վաղեմության դեպքերի եւ տարածաշրջանի ներկայիս աշխարհաքաղաքականության միջեւ, բայց դա է իրականությունը», հայտարարել է Օրոնը:**

**Ի դեպ, կոալիցիայի ղեկավարի պաշտոնում Զեեւ Էլկինի («Լիկուդ») նշանակումից հետո Օրոնը Հայոց ցեղասպանության ճանաչման պայքարում կորցրել է իր դաշնակցին:**

**«Նախկինում նա գլխավորում էր «Իսրայել-Հայաստան» միջխորհրդարանական խումբը, իսկ այժմ կտեսնենք, թե ինչ ճնշում կգործադրեն նրա վրա կոալիցիայի մյուս անդամները: Շուտով ես նրա հետ կխոսեմ... Չնայած Իսրայելի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կտրուկ վատթարացմանը եւ շատերի ցանկությանը՝ վնասելու Անկարային, ես հոռետեսորեն եմ տրամադրված», եզրափակել է նա:**

Հ. Հ.

# Դավիթ Հարությունյան-Մովլութ Չավուշօղլու. էպիստոլյար ժանրում

**Ազգային ժողովի պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանն ավելի վաղ նամակով դիմել էր ԵԽԽՎ նախագահ Մովլութ Չավուշօղլուին եւ ԵԽ գլխավոր քարտուղար Տորբյորն Յագլանդին, որտեղ նրանց կոչ էր արել ուշադրություն դարձնել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի՝ երկու անգամ ասած այն մտքին, թե հայ պարզինն միգրանտները պետք է լքեն Թուրքիան: Դ. Հարությունյանը նշել էր, որ Էրդողանի հայտարարությունները վկայում են 1915-ից հետո Թուրքիայի շարունակած խտրական վերաբերմունքի մասին՝ հանդեպ հայերը: Այդ հայտարարություններն ազգային հողի վրա խտրական վերաբերմունքի օրինակ են՝ անթույլատրելի ԵԽ անդամ երկրի համար, որով խախտվում են միջազգային կոնվենցիաներ: Հենց այս պատճառով Դ. Հարությունյանն իր նամակով ակնկալել էր ԵԽԽՎ վերաբերմունքն այդ փաստին, քանի որ եւ՛ Թուրքիան, եւ՛ ՀՀ-ն ԵԽ անդամ են՝ պարտավորված հարգելու միջազգային իրավունքի նորմերը, այդ թվում՝ ռասիզմն ու ազգային խտրականությունը դատապարտող: Չավուշօղլուին ուղղված երկրորդ նամակում Դ. Հարությունյանը վերաբերմունք է արտահայտել ԵԽԽՎ նախագահի՝ Կասինի դեպքերին վերաբերող գնահատականին, առաջարկելով նրան Հայոց ցեղասպանության վերաբերյալ էլ այդպիսի մոտեցում դրսեւորել: Նամակների արձագանքը դեռեւս սպասվում է:**

# «Օրերը՝ տողերի միջով»

**Երեկ Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ Կարեն Դեմիրճյանի «Օրերը տողերի միջով» գրքի շնորհանդեսը: Այն ընդգրկում է Դեմիրճյանի աշխատանքային օրագրերը, որոնք պահպանվել են կնոջ՝ Ռիմա Դեմիրճյանի ջանքերով: Անդրադառնալով գրքին, որի հրատարակմանն աջակցել է ՀՀ կառավարությունը, գրքի խմբագիր Վլադիմիր Պետրոսյանը նշեց, որ ընդգրկված են Դեմիրճյանի 15 տարիների աշխատանքային գրառումները, բազմաթիվ հուշագրություններ աշխատանքային գործունեության մասին: Շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ Դեմիրճյանի աշխատանքային ընկերները, որոնք իրենց խոսքերում նկարագրեցին Կարեն Դեմիրճյանին՝ որպես մարդու եւ ղեկավարի:**

**Հավելենք նաեւ, որ ապրիլի 18-ին Կարեն Դեմիրճյանի ծննդյան օրն է:**



# Եվրոպական թռիչքները հետաձգվել են

Իսլանդիայում ժայթքած հրաբխի հետեւանքով եվրոպական մի շարք՝ հատկապես հյուսիսային երկրների օդանավակայաններ հրաժարվում են կազմակերպել թռիչքներ կամ ընդունել դրանք: Հենց այս պատճառով երեկ հետաձգվել էին Երեւան-Լոնդոն-Երեւան եւ Երեւան-Փարիզ-Երեւան չվերթերը: «Արմավիա» եւ British Airways ավիաընկերությունները տեղեկացնում են, որ «Եվրոպայի հյուսիսարեւմտյան հատվածում գոյություն ունեցող հրաբխային մոխրով հարուստ ամպը վտանգավոր է թռիչքների իրականացման համար»: Բրիտանական ավիաընկերությունն առհասարակ հետաձգել է ապրիլի 16-ին նախատեսված բոլոր թռիչքները: Իսկ «Արմավիան»՝ «Շառլ դը Գոլ» օդանավակայանի չգործելու պատճառով, հետաձգել է Երեւան-Փարիզ-Երեւան չվերթը: Ընդ որում «Արմավիան» չի բացառել, որ հետագայում կարող են հետաձգվել նաեւ դեպի եվրոպական այլ ուղղություններով թռիչքներ:

Հ. Ա.

# Լեհաստանի նախագահի հուղարկավորությունը չի հետաձգվի

Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկու եւ նրա տիկնոջ՝ Կրակովի Վավելյան ամրոցում նախատեսված հուղարկավորության արարողությունը հետաձգելու տարբերակը չի քննարկվում, Report.am-ի փոխանցմամբ, լեհական VN24 հեռուստաալիքով հայտարարել է Լեհաստանի նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ Յացեկ Սասինը: Այսպիսով, նա հերքել է ավելի վաղ լեհական ռադիոյով իր ասածը: Այն ժամանակ նա չէր բացառել հուղարկավորության հետաձգումը Եվրոպայում ավիահաղորդակցության խաթարման պատճառով: Լեհաստանի Կրակով քաղաքի օդանավակայանը փակ է Իսլանդիայի հրաբխի ժայթքման պատճառով: Հենց այս օդանավակայանում պետք է վայրէջք կատարեն Լեհաստանի նախագահի հուղարկավորության արարողությանը մասնակցելու համար ժամանող հյուրերը (այդ թվում՝ Հայաստանի ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը): Արարողությունը ծրագրված է ապրիլի 18-ին:

# Հայ լրագրողին Տիրասպոլում ներկայացվում է լրտեսության մեղադրանք

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի

«Մենք խորապես մտահոգ ենք Էռնեստ Վարդանյանի ճակատագրով եւ կոչ ենք անում մոլդովական իշխանություններին անել հնարավորը նրան անհապաղ ազատ արձակելու համար»: Այսպիսի հայտարարության տակ ստորագրել են Թբիլիսիում ապրիլի 15-16-ին տեղի ունեցած «Ազատ լրատվամիջոցների պաշտպանության մեխանիզմները. աջակցություն Հարավային Կովկասում, Մոլդովայում եւ Ուկրաինայում արտահայտման ազատության արդյունավետ երաշխիքների ապահովմանը» թեմայով կոնֆերանսի մասնակից տարբեր լրագրողական ու մամուլին վերաբերող կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Շվեյցարիայի նախագահությամբ եւ նախաձեռնությամբ Եվրոպայի խորհրդի կազմակերպած կոնֆերանսի մասնակիցների հայտարարությունը վերաբերում էր ապրիլի 7-ին Մերձդնեստրում տեղի իշխանությունների կողմից հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանի ձերբակալությանը՝ մեղադրելով նրան դավաճանության եւ լրտեսության մեջ:



Վարդանյանը հայտարարությամբ ներկայացվում է որպես քաղաքական վերլուծաբան եւ ռուսական «Նովի ռեգիոն» գործակալության Տիրասպոլի մասնաճյուղի նախկին թղթակից, անցյալ տարվանից էլ աշխատել է մոլդովական «Պուլս» պարբերականում:

«Ազատություն» ռադիոկայանի մոլդովական ծառայության թղթակից Ռադո Բենեան նշել է, որ Վարդանյանը Տիրասպոլից ամեն օր ավտոբուսով գնացել է Քիշնեւ՝ աշխատանքի: «Նա մեկն էր Մերձդնեստրում ապրող այն փոքրաթիվ լրագրողներից, ով առանց վախի քննադատում էր տեղական իշխանություններին, միեւնույն ժամանակ, երբեւիցե չէր խախտում լրագրողական էթիկայի կանոնները», ասել է Բենեան:

«Գործընկերները, մարդիկ, ովքեր ճանաչում էին Էռնեստին, ցնցված են ... Որպես լրագրող, քաղաքագետ՝ նա միշտ շատ կոռեկտ էր, եթե նույնիսկ քննադատում էր իշխանություններին, ապա՝ միշտ զուսպ եւ առանց էթիկայի նորմերը խախտելու: Մենք նրան ձերբակալելու որեւէ պատճառ չենք տեսնում, ուղղակի ապշած ենք», ասել է Բենեան:

Տիրասպոլից լրագրողին ներկայացված մեղադրանքների եւ այն հիմնավորող փաստերի մասին որեւէ մանրամասն ու բացատրություն չեն հաղորդում: Հայտնի է միայն, որ եթե առաջադրված մեղադրանքն ապացուցվի, Վարդանյանը կարող է 12-20 տարվա ազատազրկման դատապարտվել:

Տես էջ 2

AZG NEW PDF.qxd 16/04/2010 22:40 Page 1



# Ընթացիկ

### Հայ-թուրքական

Մինչ վաշինգտոնյան հանդիպումներից հետո երկրի նախագահը կհանդիպի Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ, կվերադառնա երկիր եւ կխոսի՝ երեկ քաղաքական դաշտը տարբեր մամուլի ակումբներում եւ հեռուստաեթերներում շարունակում էր տարուբերվել հայ-թուրքական թեմաներով: Կարծիքներում հնչած ենթադրությունները հայ-թուրքական զարգացումների ուղղությամբ կարելի է խմբավորել. ա) հայ-թուրքական սահմանը կբացվի, այնուհետեւ կտեսնեն, թե

## Երկու նրբաշեշտ՝ երեկվա օրից

ինչ կլինի արձանագրությունների ճակատագիրը. բ) Հայաստանն ավելի վաղ կվավերացնի արձանագրությունները (սա բայց կարծես այլեւս այնքան էլ ակտուալ չէր համարվում, շատ-շատ՝ ենթադրություններում միաժամանակյա գործընթացը դեռ շանս ուներ), գ) թուրքական խորհրդարանը կվավերացնի արձանագրությունները վերապահումով (վերապահումը կամ Ղարաբաղին, կամ Հայոց ցեղասպանությանը, կամ էլ այդ երկուսին միասին հավանաբար կվերաբերի), այս դեպքում Հայաստանի նախագահը կպահի իր խոսքը, այն է՝ հետ կվերցնի արձանագրությունների ստորագրությունը: Ահա հավանական այն տարբերակները, որ քննարկվում էին երեկվա դրությամբ, ընդ որում՝ առաջին տարբերակի հավանականությունը մեկ օր առաջ նշել էին ե՛ւ ամերիկյան շրջանակների տրամադրություններից լավ տեղյակ Ռիչարդ Կիրակոսյանը, եւ ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանը: Վերապահումների լեզվով Թուրքիայի խոսելուն որպես պատասխան քայլ՝ երեկ ԲՀԿ-ական Արամ Սաֆարյանը համարել էր ե՛ւ չվավերացնելը, ե՛ւ նույն կերպ վերապահումներով կամ կից հայտարարությամբ վավերացնելը (այս դեպքում, սակայն, համապատասխան օրենսդրական փոփոխություն է պետք, ինչն անցած քառօրյայում մերժվել էր):

Այս քանի օրն, այո՛, առկա է այն վարկածը, որն ավելի վաղ, մինչեւ վաշինգտոնյան հանդիպումը մերոնք չէին քննարկում. ԱՄՆ-ը հավանաբար հանգել է այն վարկածին, որ հայ-թուրքական հարաբերությունները զարգանան ոչ թե թղթերով, այլ նախ կոնկրետ՝ գործնականում, իսկ հետո արդեն որոշակի տնտեսական արձանագրումներից հետո արձանագրություն ստորագրելը տեխնիկայի գործ կլինի: Ի դեպ, «Կալիֆոռնիա կուրիերի» խմբագիր Հարութ Սասունյանի դիտարկման համաձայն էլ՝ Հայաստանի եւ Թուրքիայի վրա Սպիտակ տան ճնշման արդյունքը կլինի մինչեւ արձանագրությունների վավերացումը հայ-թուրքական սահմանի բացումը: Իսկ եթե թուրքական կողմը համառի, ըստ Սասունյանի, Հայաստանի նախագահին այլ բան չի մնա, քան հետ վերցնել ստորագրությունը՝ թուրքական նախապայմանները վկայակոչելով:

Իսկ այն տեսակետներին, թե թուրքական կողմը ցայտնոտի մեջ է, ճանապարհային քարտեզ կա՞, թե չկա՝ դեռ կարելի է լուրջ չվերաբերվել, այլ համարել էմոցիոնալ բաղադրիչ՝ մինչեւ լիարժեք տեղեկատվության եւ երկրի ղեկավարության դիրքորոշման հայտնի դառնալը:



### Ոստիկանական

Երեկվա օրը նաեւ առանձնացավ որպես հայոց ոստիկանության ծննդյան տոն, ինչը, սակայն, նախօրեին ստվերվել էր Չարենցավանի ցավալի դեպքով, Չարենցավանի ոստիկանություն տարված 24-ամյա Վահան Խալաֆյանը, վարկածներից մեկով, ինքնասպանություն է գործել ոստիկանության բաժնում որովայնից դանակահարելով ինքն իրեն, իսկ ըստ այլ վարկածների եւս մեկի՝ նրա զգեստի վրա դանակահարության հետք չկա, այլ միայն մարմնին, այն էլ խոշտանգման հետքերին զուգահեռ: Արդյո՞ք այս անգամ կհաջողվի իրական հետաքննություն իրականացնել, թե՞ ամեն ինչ մեզ նորից կհիշեցնի Լեւոն Գուլյանի դեպքը, երբ էլի ոստիկանություն տարված երիտասարդը մահացավ, իսկ որպես բացատրություն հնչեց ոչ մեկի վստահություն չներշնչող ինքնասպանությունը՝ պատուհանից ցած նետվելով:

Ոստիկանության տոնի օրվա առաջին զգացողությունը հասարակ մարդու մեջ պետք է լինի խանդաղատանքը՝ իր անվտանգության երաշխիք ոստիկանի ու ոստիկանության հանդեպ: Քանի՞ հայ մարդ վստահորեն այդպիսի զգացողություն ունեցավ երեկ՝ հարցը սա է: Հարցը պետք է լինի վստահության ձեւավորումը՝ հանդեպ ոստիկանի կերպարը, ինչը, խոստովանենք, շատերս չունենք տարբեր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով: Եվ ես իմ ականջներին չեմ հավատում, երբ ոստիկանապետը կարող է ասել, թե իրեն ո՞ւմ քաղաքական թիմում է տեսնում: Եղբայր, երկրի սահմանադրությամբ եւ օրենքներով ոստիկանապետը պետք է պաշտպանի օրինականությունն ու օրենքը եւ ոչ թե իրեն տեսնի որեւէ մեկի քաղաքական թիմում. «Ներքին գործերի նախարարն ի պաշտոնե պետք է հայտնվի երկու վիճակներից մեկում՝ կամ պետք է իշխանությանը պաշտպանի մինչեւ վերջ եւ հայտնվի հաղթողի դերում, կամ պետք է հայտնվի այն դերում, որում հայտնվեց Ղրղզստանի ՆԳ նախարարը», ասել է մեր ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը եւ սխալվել է, որովհետեւ օրենքով ուժային կառույցները չպետք է զբաղվեն քաղաքականությամբ. եթե զբաղվում եք՝ գոնե թաքցրեք: Իսկ եթե այս եւ սրա նման այլ մտքեր ասվել են առանց մտածելու, ուրեմն հարկ է, որ մեր ոստիկանապետը մի անգամ եւս ուսումնասիրի օրենսդրությունը եւ մյուս ասուլիսներին արտահայտվի օրենքի տառին համապատասխան:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

## ԱՄՆ-ը լավ չի՞ «համոզում» Երեւանին

**Ինչպես արդեն գիտենք, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը օրերս դժգոհություն հայտնեց Մինսկի խմբի գործունեության վերաբերյալ՝ նշելով. «Այժմ բանակցությունները թեւակոխել են վճռական փուլ, եւ Մինսկի խմբի համանախագահները համոզում են Երեւանին ընդունել վերջին առաջարկությունները, որոնց Ադրբեջանը համաձայն է»: Մինսկի խմբի անդամ է նաեւ ԱՄՆ-ը, որը փաստորեն, հենվելով նույն Ալիեւի աշխատակազմի հասարակական եւ քաղաքական հարցերի բաժնի պետ Ալի Հասանովի խոսքերի վրա, այնքան էլ լավ չի «համոզում» Երեւանին: Հասանովը նշել է, թե Ադրբեջանը համարժեք քայլեր է ձեռնարկում ղարաբաղյան կարգավորման որոնումներում, այնինչ ԱՄՆ Կոնգրեսն ու իշխանություններն աջակցում են Հայաստանի «զավթողական» քաղաքականությանը: Ինչ է ստացվում. նախագահ Ալիեւը գոհ է Մինսկի խմբից, իսկ նրա աշխատակազմի պաշտոնյան՝ ո՞չ: Կամ այդ ինչպե՞ս է լինում, որ Մինսկի խմբի համանախագահ երկրները, ըստ Ադրբեջանի նախագահի, մադրիդյան «նորացված» սկզբունքների վերաբերյալ անում են առաջարկություններ, որոնց համաձայն է Բաքուն, միեւնույն ժամանակ Մինսկի խմբի անդամ ԱՄՆ-ը պաշտպանում է Երեւանի «զավթողական քաղաքականությունը»: Հետեւաբար ճշգրիտ են այն պնդումները, թե Բաքուն խեղաթյուրում է իրականությունը՝ հորինելով «նորացված» մադրիդյան սկզբունքներ, Թուրքիայի արտգործնախարարի հետ «հարցազրույց», հայերի կողմից հրադադարի ռեժիմի պարբերաբար խախտումներ եւ այլն, եւ այլն:**

**Իսկ Բաքվում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Թերի Դեւիդսոնը, «1նյուզ.ազ»-ի տեղեկացմամբ, պատասխանելով իր երկրի հասցեին հնչած «մեղադրանքներին», նշել է. «ԱՄՆ-ը երկար տարիներ աշխատում է ղարաբաղյան խնդրի խաղաղ եւ արդար լուծմանը հասնելու ուղղությամբ: Մենք՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր, հակամարտության լուծման համար հավասարակշռված ջանքեր ենք գործադրում՝ հասկանալով, որ թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը պետք է հակամարտության կարգավորման խաղաղ սկզբունքներ ընտրեն»:**

**Ադրբեջանական «Թուրան» գործակալությունն էլ, անդրադառնալով Ալիեւի վերջին ելույթներին, բավական թերագնահատորեն, նույնիսկ հեգնանքով է մոտեցել նախագահի ասածներին: Մնում է միայն պարզել, ո՞վ է իրավացի՝ նախագահ Ալիե՞ւը, երբ խոսում է բանակցությունների «վճռական փուլի» մեկնարկի մասին, թե՞ նույն նախագահի աշխատակազմի պաշտոնյան, երբ պնդում է, թե բանակցություններում միջնորդ երկրներից մեկը պաշտպանում է Հայաստանին: Թերեւս ավելի իրատեսական է այս վերջինը, մանավանդ որ Իլհամ Ալիեւն էլ օրերս կոչ արեց համանախագահող երկրներին՝ «չպաշտպանել Հայաստանին»:**

Հ. ԱՓՅԱՆ

## ՀԴԿ ղեկավար. Սփյուռքի հետ պառակտման վտանգն անցել է

**ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը Սերժ Սարգսյանի դիրքորոշումներում էվոլյուցիոն առաջընթաց է նկատում: Սարգսյանն այդ առաջընթացը պայմանավորում է նախագահի՝ քաղաքական տարբեր կուսակցությունների ղեկավարների, հասարակական գործիչների եւ Սփյուռքի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներով: Սարգսյանը նախագահի գործողություններում տեսել է բազմաթիվ դրական քայլեր, որոնք փաստել են. հայությունը միասնական է, Սփյուռքի հետ պառակտման վտանգն անցել է:**

**«Չնայած Հայաստանը փոքր պետություն է, սակայն նախագահի վարած արտաքին քաղաքականության արդյունքում այսօր հետաքրքրության առարկա ենք դարձել, աշխարհաքաղաքական երեւույթների փոփոխությամբ Հայաստանը ձեռք է բերել տարածաշրջանային գործոնի եւ անհրաժեշտ օղակի դեր, առանց որի տարածաշրջանում հնարավոր չէ քաղաքական լուրջ որոշումներ կայացնել», ասաց Սարգսյանը:**

**Որպես խոսքերի ապացույց դեմոկրատը մատնացույց է անում ԱՄՆ-ի շահագրգռվածությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում:**

**ՀԴԿ ղեկավարը նկատում է, որ Հայաստանը պետք է խելացի կերպով օգտագործի Օբամայի եւ մյուս երկրների ղեկավարների ցուցաբերած հետաքրքրասիրության պահը եւ ճշգրիտ օգտագործի այդ եզակի հնարավորությունը:**

**«Մեզ համար այժմ մի պատուհան է բացվել, եւ որպեսզի այն փոքր փեղկ չդառնա, պետք է կարողանանք երկրորդն էլ բացել: Իսկ դա մեր իմաստությունից է կախված», նկատեց Արամ Սարգսյանը:**

Հ. Հ.

## Հայ լրագրողին Տիրասպոլում ներկայացվում է լրտեսության մեղադրանք

*1-ին էջից*

Հայաստանում ծնված, 88-ի երկրաշարժից հետո Մերձդնեստր տեղափոխված լրագրողի ճակատագրին նախօրեին անդրադարձել է նաեւ Մոլդովայի նախագահ Միխայիլ Գիմպուն: Դատապարտելով միջադեպը՝ նախագահը միեւնույն ժամանակ ընդգծել է, որ պաշտոնական Քիշնեւը որեւէ լծակ չունի Տիրասպոլի վրա ազդելու համար. «Մենք արդեն արել ենք ամեն հնարավորը, խնդիրը, սակայն այն է, որ Տիրասպոլի իշխանությունները մի յուրօրինակ բուրգ են ստեղծել, որտեղ հաշվի չեն առնում ո՛չ օրենք, ո՛չ իրավունք: Իրավիճակը կարող է փոխել միայն հասարակական կարծիքը, եվրոպական կառույցների արձագանքը, եւ մենք այժմ քայլեր ենք ձեռնարկում՝ նրանց աջակցությունը ստանալու համար»:

Պաշտոնական Քիշնեւը, մասնավորապես, խոստանում է Վարդանյանին ազատ արձակելու հարցը բարձրացնել Բրյուսելում, ապա Վաշինգտոնում՝ միջազգային կառույցների հետ նախատեսված քննարկումներում:

Մոլդովական «Պուլս» պարբերականի գլխավոր խմբագիր Դմիտրի Կավրուկն էլ ընդգծել է, որ Վարդանյանը ամիսներ շարունակ Տիրասպոլի իշխանություններից սպառնալիքներ է ստացել: «Դեռեւս անցած տարվա աշնանը նրան զանգահարել էին պետանվտանգության նախարարությունից եւ պահանջել դադարեցնել համագործակցությունը մոլդովական լրատվամիջոցների հետ», ասել է Դմիտրի Կավրուկը:

Թբիլիսիում երեկ տարածված հայտարարության մեջ նշվում է, որ երկարաձգվել է Էռնեստ Վարդանյանի ձերբակալության ժամկետը եւս երկու ամսով, մինչեւ դատական քննությունը: Հայտարարության նախաձեռնող մոլդովական լրագրողական կառույցներն ու նաեւ կոնֆերանսի մասնակից կազմակերպություններից շատերը կոչ են անում ԵԱՀԿ-ին օգտագործել իրենց «ազդեցությունը Տիրասպոլի իշխանությունների վրա՝ ազատ արձակելու Էռնեստ Վարդանյանին»:

## Ցեղասպանագետ Վահագն Տատրյանի դասախոսությունը Նյու Ջերսիում

**Օրերս Վարդանանց ասպետների եղբայրակցության նախաձեռնությամբ Նյու Ջերսիի Ֆեյր Լոն քաղաքի Սրբոց Ղեւոնդյանց հայկական եկեղեցու սրահում դասախոսեց ցեղասպանագետ, պրոֆեսոր Վահագն Տատրյանը: ԱՄՆ-ից Հակոբ Վարդիվառյանը տեղեկացնում է, որ դասախոսությանը ներկա գտնվողների մեջ եղել են նաև մեծ թվով նյուջերսիաբնակ ռամկավար-ազատականներ: Մեկ ժամ տեւած դասախոսությունը հիմնված է եղել գիտական տվյալների վրա: Դասախոսության ժամանակ Վահագն Տատրյանը նշել է. «Եթե անպատիժ են մնում ցեղասպանները, ապա պատմության մեջ կրկնվում են ոճրագործությունները»:**

Ի. Պ.

## «Ազերիները պետք է ավելի զգույշ եւ արդար լինեն»

**Այս կարծիքն է արտահայտել թուրք հայտնի լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդը «Հյուրիեթի» ապրիլի 14-ի համարում, գրելով որ մինչեւ Թուրքիայի կառավարական ներկայացուցիչները խառնաշփոթ իրավիճակում են՝ փորձելով վաշինգտոնյան հանդիպումների միջոցով կանխել «ցեղասպանություն» բառեզրի օգտագործումը նախագահ Օբամայի ապրիլքսանչորսյան ելույթում, ազերիները մասը մասին չեն տալիս նեցուկ կանգնելու Թուրքիային: «Նրանք պարզապես դիտում են եւ հեգնում», գրում է նա, հիշեցնելով, որ արձանագրությունների ժամանակ, երբ Բաքվից հակազդեցություններ հնչեցին եւ թուրքական դրոշը իջեցրին, վարչապետ Էրդողանը «մի քայլ հետ գնալով» արձանագրությունները կապեց Ղարաբաղի հակամարտության հետ, ցույց տալու համար, որ ազերիները մենակ չեն: «Իսկ ազերիները երբեւէ, գեթ մի օր, թուրքերի կողքին կանգնե՞լ են Ցեղասպանության հարցում, ես այսպիսի բան չեմ հիշում», գրում է Բիրանդը: «Նրանք կարծում են, եւ գործում համապատասխանաբար, որ Թուրքիան ավելի շատ կարիքն ունի նրանց, քան իրենք՝ Թուրքիայի: Այս ամբարտավանությունն ինձ զայրացնում է: Նրանք իրենց այնպես են պահում, կարծես հասկացնել են ուզում, որ Թուրքիային ծնկի են բերել: Սրանից հետո նրանք ավելի ուշադիր պետք է լինեն երկկողմանի հարաբերություններում: Նրանք առավել զգույշ եւ արդար պետք է վերաբերվեն Թուրքիային», եզրակացնում է Մեհմեդ Ալի Բիրանդը:**

Հ. Ծ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 16/04/2010 20:59 Page 1



# Օբամայի ապրիլի 24-ի ելույթից հետո Էրդողանը կվերադառնա նախկին դիրքին

Նախագահ Սերժ Սարգսյանի վաշինգտոնյան այցը, հանդիպումները ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ թուրքագետ, «Ազգ» օրաթերթի քաղաքական մեկնաբան Հակոբ Չաքրյանը գնահատում է դրական եւ հաջողված: Գլխավոր նախապայմանը միջազգային իրավիճակն էր, որ խոսում էր մեր օգտին: Սարգսյանը Վաշինգտոնում ներկայացավ ավելի նպաստավոր պայմաններում, քան Էրդողանը: Թուրքերը հանդիպմանը երկու առաջարկ էին դրել՝ ստիպել Հայաստանին ղարաբաղյան խնդիրն ընդունել նախապայման հայ-թուրքական հարաբերությունների առաջխաղացման գործընթացում եւ պարտադրել հայկական կողմին՝ զիջումներ անել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում, ինչին նախագահը բացասական պատասխան տվեց: Նույն առաջարկը Էրդողանը ներկայացրեց նաեւ Օբամային ու ստացավ մերժում: Նա հիշեցնում է, որ դեկտեմբերին Վաշինգտոն այցելության ժամանակ Օբաման Էրդողանին ասել էր, որ հայ-թուրքականը առնչություն չունի ղարաբաղյան հարցի հետ: Նույնը կատարվեց Կրեմլում. ՌԴ վարչապետ Պուտինը հստակ հայտարարեց՝ գործընթացները չպետք է շաղկապել: Այս ֆոնի վրա Վաշինգտոնում Էրդողանի դիրքն ավելի անբարենպաստ էր:

Ըստ թուրքագետի, վաշինգտոնյան հանդիպումից հետո Հայաստանը չպետք է քայլեր ձեռնարկի: «Հայաստանն իր ստանձնած պարտավորությունները կատարել է: Եթե հայկական կողմը արձանագրությունները վավերացնի՝ սխալ քայլ չի կատարի, որովհետեւ թուրքերը կկանգնեն փաստի առաջ, քանի որ միջազգային ուժերի շահագրգռվածությունը մեծ է: Եթե մի կողմը վավերացնում է, մյուսը՝ հրաժարվում, ձախողման դեպքում պատասխանատվությունը չվավերացնող կողմի վրա է ընկնում», «Տեսակետ» ակումբում ասաց նա:

Մի շարք քաղաքագետներ, հայ-թուրքական հարաբերություններում առաջընթաց չնկատելով, կարծիք էին ներկայացրել, որ արձանագրությունները պետք է հետ կանչել: Այս դիտարկմանը թուրքագետը համամիտ չէ:

«Կդառնանք միջազգային քննադատությունների եւ ճնշման թիրախ: Եթե արձանագրությունները հետ կանչենք, դա ի՞նչ է տալու հայկական կողմին: Թուրքական կողմը թող մերժի, իսկ մենք մեր ասածից չենք հրաժարվում, հայկական կողմը պարտավորությունները կատարել է եւ սպասում է հակառակ կողմի քայլին: Ինչո՞ւ հետ կանչենք: Եթե հետ կանչենք, թուրքերը ձախողման մեջ կմեղադրեն մեզ՝ ասելով, որ իրենք պատրաստակամ էին, հայկական կողմը ձախողեց»:

Վերլուծելով իրավիճակը՝ Չաքրյանը փաստում է. վաշինգտոնյան հանդիպումից հետո որեւէ լուրջ, նկատելի տեղաշարժ չի լինի: «Հայ-թուրքական արձանագրությունները փակուղային իրավիճակում են, հարաբերությունների նորմալացման գործընթացը վերադառնում է ելման կետ: Փրկելու փորձ արվեց, բայց չեմ կարծում, որ այն հաջողություն կբերի: Հարցին կարելի է հստակ պատասխանել Օբամայի ապրիլի 24-ի ելույթից հետո: Ենթադրում եմ, որ Էրդողանը կվերադառնա իր նախկին դիրքին»:



Ստեփան Ստեփանյան, Հակոբ Չաքրյան

Թուրքագետը զարմանում է, երբ կարդում է, որ քաղաքագետները կանխատեսումներ են անում՝ արդյոք Օբաման կարտասանի՞ «ցեղասպանություն» բառը: Նրա դիտարկմամբ՝ դա ընդամենը շառլատանություն է:

«Ոչ ոք չի կարող հիմնավորել, թե ինչ կասի Օբաման: Առանց հիմնավորման կարծիքը վերածվում է ենթադրության, ինչի հիման վրա ոչ թե կանխատեսում են անում, այլ՝ կանխագուշակում: Բազմաթիվ քաղաքագետներ կանխատեսումը կանխագուշակումից չեն տարբերում», ասում է նա:

Չաքրյանը նկատում է, որ ապրիլի 24-ը 2010-ով չի վերջանում, մինչդեռ Թուրքիայի հակահայկական քաղաքականությունն ու ժխտողական դիրքերը նահանջում են ու պարտվում: «Եթե այս տարի Օբաման չարտասանի «ցեղասպանություն» բառը, մյուս տարի թուրքերը նոր գլխացավանքի առաջ են կանգնելու եւ երկրում խուճապի նոր ալիք է բարձրանալու»:

Պատմաբան **Ստեփան Ստեփանյանը**, խոսելով պահանջատիրության մասին, նկատեց, որ հետագա ցեղասպանությունները կանխելու համար պետք է վերացնել նախորդների հետեւանքները: «Նահատակներին չես վերակենդանացնի, բայց կորցրած հայրենիքից չես կարող հրաժարվել: Կորցրած հայրենիքը պետք է վերադարձվի: Մինչեւ ե՞րբ պետք է Մասիսը՝ մեր խորհրդանիշը, մնա այնտեղ: Անհնար է հրաժարվել մեր արդարացի պահանջներից», ասաց նա:

Չաքրյանը նկատում է, որ հողային պահանջները շատ դժվար են լուծվում: Նա օրինակ է բերում արաբա-իսրայելական եւ կիպրական խնդիրները, որոնք արդեն մի քանի տասնամյակ չեն լուծվում: «Ներկա պահին արդյոք նպատակահարմա՞ր է բարձրացնել պահանջատիրության խնդիր: Այն կարելի է բարձրացնել, երբ Ցեղասպանության ճանաչումը լինի լիարժեք. գոնե ԱՄՆ-ն, Գերմանիան ու Անգլիան էլ ճանաչեն: Եթե առանց միջազգային աջակցության պահանջատիրության հարց բարձրացնենք, տանուլ կտանք: Միջազգային իրավիճակի առանձնահատկություններն էլ պետք է նպաստավոր լինեն: Պետք է հասկանանք՝ որո՞նք են հաջորդ քայլերը: Միայն պահանջելով հարցը չի լուծվի: Եթե պահանջենք մեր հողերը Սեւրի պայմանագրի դրույթներով, նրանք էլ կարող են պահանջել Ալեքսանդրապոլի պայմանագրի դրույթները: Պահանջատիրություն դնելու դեպքում այն երկրները, որ պատրաստ էին ճանաչել Ցեղասպանությունը, կմտածեն, որ Թուրքիայի հետ կբախվեն ավելի մեծ պրոբլեմների եւ կհրաժարվեն ճանաչել: Պահանջատիրության ժամանակը դեռ չի եկել: Հետեւանքները պետք է լրացվեն, բայց պետք է ելնել Հայաստանի կարողություններից եւ միջազգային իրավիճակի առանձնահատկություններից: Չի կարելի առանց հաշվարկման քայլեր իրականացնել»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

# Կուբանի ժողովուրդների կոչը Թուրքիայի կառավարությանը

Ինչպես տեղեկանում ենք Arunion.info կայքէջից, Կուբանում ապրող տարբեր ժողովուրդների միավորումները ներկայացնող 24 հասարակական կազմակերպությունների ղեկավարներ դիմում-կոչ են հղել Թուրքիայի կառավարությանը: Այդ կազմակերպությունների մեջ կան ռուսների, կազակների, ասորիների, հույների, լեզգիների, քրդերի, դաղստանցիների, օսերի, աբխազների, գնչուների, բաշկիրների, հրեաների, սիրիացիների, գերմանացիների, թաթարների, հայերի հասարակական, մշակութային միավորումներ:

Փաստաթղթում նշվում է, որ Ռուսաստանի Դաշնությունն աշխարհի առավել բազմազգ պետություններից մեկն է, որտեղ վաղուց կողք-կողքի ապրում են տարբեր ազգությունների եւ դավանանքների մարդիկ, չենթարկվելով հալածանքների:

Թուրքիան շատ ժողովուրդների համար հայրենիք է, բայց այնտեղ զգալի է ազգային եւ կրոնական խտրականությունը: Դա խոչընդոտում է իրոք ժողովրդավարական հասարակության ստեղծմանը, որը հիմնված կլիներ ժողովուրդների բարեկամության եւ փոխվստահության վրա:

Թուրքիայի ժողովուրդների փոխհարաբերություններում հետագա թյուրիմացությունները բացառելու համար երկրի կառավարությունը եւ խորհրդարանը պարտավոր են արդարացի գնահատել 1915-1923 թթ. իրադարձությունները, դատապարտել ազգային հողի վրա բնիկ ժողովուրդների բնաջնջումը եւ մեղա գալ միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակի առջեւ:

20-րդ դարի առաջին Ցեղասպանության՝ հայերի Մեծ եղեռնի անպատիժ մնալը հիտլերյան Գերմանիայում օրինակ ծառայեց ուրիշ ժողովուրդների, մասնավորապես, հրեաների հանդեպ նույնպիսի վայրագություններ կատարելու համար: Նոր Գերմանիայի ղեկավարությունը բավականաչափ մարդկային եւ արի գտնվեց պետության պատմության այդ խայտառակ փաստը խոստովանելու եւ հրեշավոր ոճիրներ գործած գերմանացիների փոխարեն պաշտոնապես ներողություն խնդրելու համար:

Ցեղասպանությունը դատապարտող ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 1946 թ. դեկտեմբերի 11-ի բանաձեւը, ինչպես նաեւ Ցեղասպանությունը կանխելու եւ դրա համար պատժելու վերաբերյալ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ընդունած կոնվենցիան հենց համաշխարհային ընկերակցության հակազդեցությունն էին Հայոց ցեղասպանության (Օսմանյան Թուրքիա) եւ հրեաների ողջակիզման (Գերմանիա) կապակցությամբ: Տվյալ փաստաթղթերի անանց նշանակության պերճախոս վկայությունն է այն փաստը, որ դրանք ընդունվել են նույնիսկ Մարդու իրավունքների հռչակագրից առաջ:

Կուբանի ժողովուրդների հասարակական կազմակերպությունների ղեկավարները Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի նախօրեին Թուրքիայի կառավարությանը կոչ են անում խոստովանել այդ փաստը, չխանգարելով պատմական ճշմարտության հաղթանակին եւ նպաստելով Մերձավոր Արեւելքում ու Հարավային Կովկասում հաշտության ու համաձայնության հաստատմանը:

# Ղարաբաղի օմբուդսմենի ինստիտուտը կարող է նաեւ օրինակ ծառայել Ադրբեջանի համար

Երեկ, օրվա վերջին, Ստեփանակերտում գտնվող ՀՀ մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանն** արցախցի իր գործընկերոջ հետ հրավիրել էր համատեղ մամուլի ասուլիս:

Հայաստանի օմբուդսմենի խոսքով, երբ ինքը գիտական ոլորտում էր աշխատում, հաճախակի առիթներ էր ունենում Արցախ այցելելու, սակայն վերջին չորս տարիներին, զբաղվածության պատճառով, չի կարողացել գալ: Այդուհանդերձ, Արմեն Հարությունյանը մտադիր է առաջիկայում իր այցելությունները հաճախակի դարձնել, հաշվի առնելով արմատներով արցախցի լինելը: Նրա համոզմամբ, ամեն մարդ պետք է մերձ լինի իր արմատներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ, չնայած Ղարաբաղում օմբուդսմենի ինստիտուտը նոր է ստեղծվել, սակայն անցած երկու տարում այստեղ լավ ավանդույթներ են ձեւավորվել, ինչը կարող է նույնիսկ օրինակ ծառայել ուրիշ երկրների, մասնավորապես Ադրբեջանի համար:

ՀՀ եւ ԼՂՀ ՄԻՊ-երի համագործակցությունը հստակ է: Ղարաբաղյան կառույցը Օմբուդսմենի եվրոպական ինստիտուտի լիիրավ անդամ է եւ այդ ճանաչվածության շրջանակում էլ լիարժեքորեն իրականացնում է իր գործունեությունը:

Իրավական մշակույթի առումով, ըստ Արմեն Հարությունյանի, վիճակը չի կարելի համեմատել Հայաստանի հետ, որովհետեւ Ղարաբաղում ընդդիմության եւ իշխանությունների միջեւ չկա այն սրվածությունը, ինչն առկա է Հայաստանում:

Այս համատեքստում ԼՂՀ օմբուդսմեն **Յուրի Հայրապետյանը** հավելեց, որ իրենց ավելի հաճախ բողոքներով դիմում են դատական որոշումների առնչությամբ կամ ոստիկանության աշխատակիցների գործողությունների առիթներով: Այն հարցին, թե ԼՂՀ-ում կոռուպցիայի դեմ իրականացվող աննախադեպ պայքարի շրջանակում՝ ի՞նչ է արվում ՄԻՊ աշխատակազմում այն վերացնելու ուղղությամբ, Յուրի Հայրապետյանը պատասխանեց, որ անիմաստ է խոսել կոռուպցիայի մասին մի համակարգում, որը կոչված է մարդու իրավունքները պաշտպանելու: Նա տեղեկացրեց, որ վերջերս իրենց մի աշխատակցի՝ կենցաղում կատարած հանցագործությունը, թեպետ նախաքննությամբ տվյալ քրգործն ի վերջո այլ իրավական հիմքերով կարճվել է, առիթ է դարձել վերջինիս աշխատանքից հեռացնելու:

«**Ազգը**» հարց ուղղեց ՀՀ օմբուդսմենին՝ արդյոք եղե՞լ են դեպքեր, երբ ԼՂՀ քաղաքացիներն իրենց հուզող խնդիրներով դիմել են նրան: Արմեն Հարությունյանն ասաց, որ նման դիմումներ իրենց գրասենյակը դեռեւս չի ստացել, միեւնույն ժամանակ, ինքը միջամտել է, որ չճանաչված երկրների օմբուդսմեններից ստացված հարցերով ուղղակի դիմեն ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանին: Այս առնչությամբ Յուրի Հայրապետյանն ավելացրեց, որ ծագած հարցերով իրենք առիթներ ունեցել են դիմելու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Դրանք կապված են եղել հիմնականում այլ երկրներում բնակվող ԼՂՀ քաղաքացիների խնդիրներին:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

# Նախքան Հայաստանի սահմանի բացումը Թուրքիան սփյուռքի առջեւ բացում է իր ներկայացուցչությունների դռները

*1-ին էջից*

Խորհրդակցությունում Դավութօղլուն արտահայտվել է պաշտոնական Երեւանի հետ հարաբերությունների մոտալուտ նորմալացման մասին եւ ավելացրել. «Նորմալացումը լիարժեք կիրականանա այն դեպքում միայն, եթե դրանում ներառվի նաեւ սփյուռքը: Այս գործընթացը ավարտին է հասնելու սփյուռքի անմիջական ներառումով»:

Այնուհետեւ Թուրքիայի արտգործնախարարը խորհրդակցության մասնակից դեսպաններին եւ հյուպատոսներին արել է հետեւյալ կարգադրությունները.

հայկական սփյուռքի առջեւ բացել Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունների դռները եւ հրավիրել սփյուռքահայերին,

արձագանքել սփյուռքի հրավերներին, մասնակցել սփյուռքահայերի կազմակերպած միջոցառումներին եւ նրանց պատմել Թուրքիայի դիրքորոշումը,

Թուրքիա հրավիրել նաեւ հակաթուրքականի համարում ունեցող սփյուռքահայ գործիչներին,

մասնակցել հայ դիվանագետների կազմակերպած ժողովներին,

բացատրական աշխատանքով դիմել անխտիր բոլորին՝ հայերին, մակեդոնացիներին, ալբանացիներին, պաղեստինցիներին եւ իրազեկել Թուրքիայի կեցվածքի մասին:

Դավութօղլուի խորհրդակցությանը երեկ «Սաբահն» անդրադարձել է «Նախքան սահմանները, թուրքական ներկայացուցչությունների դռներն են բացվում սփյուռքի առջեւ» վերնագրով: Ըստ թուրքական թերթի, Կանադայում եւ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպաններին եւ այս երկրներում հավատարմագրված թուրք հյուպատոսներին արված կարգադրությունները թուրքական դիվանագիտական առաքելություններին են փոխանցվել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ վաշինգտոնյան հանդիպումներից հետո:

AZG NEW PDF.qxd 16/04/2010 21:04 Page 1



# Զարմանալի հայեր

1990-ական թվականների սկզբին մի հետաքրքրական գործ էի նախաձեռնել. «Զարմանալի հայեր» խորագրով ակնարկներ էի գրում ճակատագրի բերումով աշխարհի տարբեր անկյուններում հայտնված այն հայերի մասին, ովքեր անցնելով դառն ու դժվար ճանապարհներ, ոչ միայն չէին կորցրել իրենց ազգային ինքնությունը, այլեւ օտար երկրներում հասել էին բարձր դիրքերի:

Ահա նման մի հայի մասին գրելու նպատակով, աշնանային այդ օրը, Լոս Անջելեսից ուղեւորվեցինք Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Մեքսիկայի սահմանագծին գտնվող Սան Դիեգո քաղաքը՝ հանդիպելու ԱՄՆ-ի արեւմտյան տարածաշրջանի ներգաղթողների գերատեսչության ղեկավար Բեն Դավիդյանին: Ուղեկիցս ամերիկահայ քոլեջի տնօրեն Կարպիս Տեր-Եղիայանն էր, որ քաջածանոթ լինելով ամերիկահայության կյանքին՝ տեղեկություններ էր տալիս նշանավոր ամերիկահայերի մասին:

Սան Դիեգո թեքվելուց առաջ, ճիշտ Մեքսիկայի սահմանագլխին, Տեր-Եղիայանն արգելակեց մեքենան՝ առաջարկելով քաղաք մտնելուց առաջ նախաճաշել ճամփեզրի սրճարանում:

Կեսօր էր, սրճարանը մարդաշատ էր: Մի քիչ սպասեցինք մուտքի մոտ, մինչեւ սպասարկողը քաղաքավարությամբ մեզ ուղեկցեց դեպի հենց նոր ազատված սեղաններից մեկը, որ գտնվում էր սրճարանի ճիշտ կենտրոնում: Մենք զրուցելով գրավեցինք մեր տեղերը եւ անցանք ճաշացանկի «ուսումնասիրությանը», մի արարողություն, որին Ամերիկայում շատ «լուրջ գործի» կշիռ են տալիս: Շուտով ես ձանձրացա՝ ընտրությունը թողնելով ուղեկցիս:

- Ես այս գրքերը չեմ սիրում կարդալ,- կատակով ասացի, մի կողմ դրեցի ճաշացանկի հաստափոր «հատորը» ու սկսեցի լայն պատուհաններից նայել գեղեցիկ բնապատկերին...

Հանկարծ հայացքս դիպավ դիմացի բարի փայտե միջնորմի մոտ կանգնած միջին տարիքի տղամարդուն, որը սեւեռված մեր կողմն էր նայում: «Մի՞թե Ամերիկայում նույնպես կարող են անպարկեշտ նայել», մտածեցի: Նույն պահին որսալով հայացքս, տղամարդը թեթեւակի ժպտալով՝ խոնարհվեց: Հայացքս շրջեցի դեպի պատուհանը:

Տեր-Եղիայանը, կարծես ավարտելով ճաշացանկի ուսումնասիրությունը, սկսեց թվարկել իր ընտրած ուտեստները, եւ համաձայնությունս ստանալով՝ մոտ կանչեց մատուցողին: Այդ ընթացքում նկատեցի, որ մեզ հետեւող տղամարդը դանդաղորեն անցավ մեր կողքից, քայլեց մինչեւ սրճարանի ծայրը, ապա հետ դարձավ՝ դարձյալ հայացքը մեր կողմը: Նույն գործողությունը կրկնվեց մի քանի անգամ: Հերթական անգամ նա մոտեցավ մեր սեղանին ու ասաց.

- Ներեցեք, ես այս սրճարանի տերն եմ: Կարո՞ղ եմ արդյոք մի հարց տալ ձեզ:

- Անշուշտ, խնդրեմ,- պատասխանեց Տեր-Եղիայանը, որ զբաղված լինելով ճաշացանկով, ամենեւին չէր էլ նկատել այդ անցուդարձը:

- Դուք ի՞նչ լեզվով եք խոսում:

- Հայերեն, լսած կա՞ք արդյոք հայերի մասին,- իր հերթին հարցրեց Տեր-Եղիայանը:

Տղամարդը նկատելի հուզվեց:

- Կարո՞ղ եմ արդյոք մի քիչ նստել ձեզ մոտ ու լսել, թե ինչպես է հնչում հայերենը: Ես էլ հայ եմ, բայց մեծ մորս մեռնելուց հետո, երբեք այլեւս չեմ լսել հայերեն,- թեթեւակի դողացող ձայնով ասաց նա:

Մենք նույնպես հուզվեցինք այդ անսպասելի իրողությունից: Մինչ այդ սառն ու չոր հայացքս անմիջապես ջերմացավ...

Հնչեց այն առաջին հարցը, որ սովորաբար տալիս են միմյանց պատահական հանդիպած հայերը:

- Արմատներով որտեղի՞ց են Ձեր նախնիները:

- Խարբերդից:

- Խարբերդի՞ց,- այս անգամ հուզումով ասաց Տեր-Եղիայանը: - Ես էլ Խարբերդից եմ: Անցած տարի այցելեցի Հայրենիք, մեծ դժվարությամբ գտա հայրական տունս:

- Իսկապե՞ս, նախանձում եմ Ձեզ: Ես ոչինչ չգիտեմ իմ նախնիների երկրի մասին: Երբ փրկվելով ջարդերից մի կերպ նրանք հայտնվել են Ամերիկայում, մեծ հայրս հավանաբար ինքնահաստատման բնազդից մղված՝ իր երեխաներին ամերիկյան կրթության տալով չի փորձել նրանց մեջ պահպանել ազգային պատկանելությունը: Ես ծնվել եմ որպես ամերիկացի ու երբեմն զարմանում էի, թե ինչո՞ւ մեծ հորս ու մեծ մորս խոսակցությունները անհասկանալի էին ինձ: Հետո, երբ խելահաս դարձա, մեծ մայրս բացատրեց ամեն ինչ: Երբ առանձին էինք լինում, նա փորձում էր ինձ հայերեն բառեր սովորեցնել: Հիմա դրանք մոռացել եմ, բայց մի գեղեցիկ մեղեդի միշտ հնչել է հոգուս մեջ:

Ու նա, լարելով հիշողությունը, փորձեց արտաբերել տարիներով հոգու խորքում քնած մեղեդին ու բառերը: Ես ճգնում էի ընկալել դրանք: Սկզբում դժվարությամբ, հետո գնալով կարծես ավելի հստակվում էր երգը: Վստահաբար՝ «Կռունկն» էր, ու ես ցածրաձայն միացա նրան, հետո միացավ Կարպիս Տեր-Եղիայանը: Շրջապատը թրթռում էր զսպված արցունքների մեջ:

Աղոտ նկատելի էր, որ սրճարանի այցելուները զարմանքով շրջվել էին մեր կողմը: Տեսարանը, այդ օտար երգի բառերի նման, անհասկանալի էր նրանց համար:

Ուտելիքը կորցրել էր համն ու իմաստը: Ընդառաջելով մեր նորահայտ հայրենակցի ցանկությանը՝ ես եւ Կարպիս Տեր-Եղիայանը հայերեն նախադասություններ էինք փոխանակում:

Տղամարդու դեմքը երջանկություն էր ճառագում: Որոշ ժամանակ անց Տեր-Եղիայանն անհարմար զգալով նայեց ժամացույցին:

- Պիտի ներեք մեզ, ստիպված ենք հեռանալ, կարեւոր ժամադրություն ունենք...-ասաց նա, հայացքով փնտրելով մատուցողին՝ հավանաբար վճարելու համար:

- Խնդրում եմ,- ասաց տղամարդը,- Պետք չէ վճարել: Ինձ համար սա երջանիկ օր է, թույլ տվեք հյուրասիրել ձեզ...

Կարիք չկար հակաճառելու:

Ամուր ձեռքսեղմումով հրաժեշտ տվեցինք նրան:

Մնացյալ ճանապարհին անցանք լուռ, յուրաքանչյուրս խորասուզված այդ անսպասելի դեպքից ստացած մեր տպավորությունների մեջ:

Ես մի տեսակ մեղավորության զգացում ունեի: Գուցե այս չնախատեսված հանդիպումն ավելի կարեւոր էր, եւ ա՛յս հայն ավելի զարմանալի, որ հեռու-հեռավոր այդ անկյունում կառչել էր իր անցյալի մեն-մի հատիկ հիշողությանն ու փորձում է վերագտնել կապն ազգային արմատների հետ, որ երբեք չառնչվելով հայությանը, բնազդով պահպանել է նրան ամենահատուկ որակներից մեկը՝ հյուրասիրությունը...

Դեռ ինչքա՜ն, ինչքա՜ն զարմանալի հայեր կան աշխարհի հեռավոր անկյուններում... Կկարողանա՞նք արդյոք երբեւէ գտնել նրանց...

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

# Միջազգային գիտաժողով՝ եռակողմ համագործակցության շրջանակներում

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը համագործակցական կապեր ունի աշխարհի շատ առաջատար բուհերի հետ, սակայն առավել ջերմ ու արդյունավետ հարաբերություններ հաստատվել են ՀՊՏՀ-ի եւ Ռուսաստանի Դաշնության երկու՝ Ռոստովի պետական տնտեսագիտական եւ Հարավային դաշնային համալսարանների միջեւ: Հայ-ռուսական դարավոր բարեկամությունը, պատմամշակութային եւ կրթական համակարգերի ընդհանրությունները, այն իրողությունը, որ Ռուսաստանում է բնակվում ամենամեծաթիվ հայ համայնքը եւ վերոնշյալ համալսարաններում ուսանում ու բարձրորակ մասնագետի որակավորում են ստանում 10 հազարից ավելի հայ պատանիներ ու աղջիկներ, ինչպես նաեւ այլ ազդեցիկ գործոններ, անշուշտ, նպաստում են 2008 թ. նոյեմբերին սկիզբ առած եռակողմ փոխգործակցության ամրապնդմանը:

Չի կարելի շրջանցել նաեւ ՌԴ հարավային դաշնային տարածաշրջանում ՀՀ գլխավոր հյուպատոս **Արարատ Գոմցյանի** գործուն մասնակցությունը հարաբերությունների կայացման ու ամրապնդման գործում:

Օրերս ՀՊՏՀ-ն հերթական անգամ հյուրընկալեց ռուսաստանցի տնտեսագետ-գիտնականներին՝ մասնակցելու «Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության տնտեսությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրները եւ զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովին:

Երեւան ժամանելու նույն օրը ռուսաստանցի տնտեսագետները՝ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, «Տնտեսագիտության տեսություն» ամբիոնի վարիչ Նիկոլայ Կուզնեցովը , նույն համալսարանի ուսումնական աշխատանքների գծով առաջին պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, «Կոմերցիա եւ լոգիստիկա» ամբիոնի վարիչ Ադամ Ալբեկովը, տնտեսագիտության դոկտոր, «Կոմերցիա եւ լոգիստիկա» ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ ԲՈՀ-ի փորձագետ Ելենա Ակոպովան, ՌՊՏՀ Կիսլովոդսկի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վալերի Գալուստովը եւ ՌԴ Հարավային դաշնային համալսարանի «Տնտեսության պետական կարգավորման տեսություն եւ պրակտիկա» ամբիոնի վարիչ, Հյուսիսկովկասյան տնտեսական եւ սոցիալական հիմնախնդիրների գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Վիկտոր Օվչիննիկովը, այցելեցին ՀՊՏՀ:

Պատվարժան հյուրերին ընդունեց ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յուրի Սուվարյանը: Գործընկերները ողջունեցին միմյանց, հետաքրքրվեցին գործերով, գոհունակություն հայտնեցին փոխգործակցության արդյունավետության վերաբերյալ, փոխանակեցին խորհրդանշական նվերներ, ապա շրջայց կատարեցին նորակառույց մասնաշենքում, եղան գրադարանում, համակարգչային սրահներում եւ մարզադահլիճում:

Հանդիպումը ռուսաստանյան պատվիրակության հետ շարունակվեց մեծ հանդիսասրահում՝ դասախոսների, ուսանողների, մագիստրանտների մասնակցությամբ: Արդեն ամբիոնից ողջունելով գործընկեր համալսարանների ներկայացուցիչներին՝ ռեկտոր **Յուրի Սուվարյանը** հրապարակեց ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշումը՝ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Նիկոլայ Կուզնեցովին շնորհվել է ՀՊՏՀ պատվավոր դոկտորի կոչում: Վերջինս շնորհակալություն հայտնեց գիտական խորհրդին նման պատվավոր պարգեւի համար եւ կեսկատակ, կեսլուրջ հավելեց. «Սա մեր հետագա համագործակցության կանխավճարն է»:

ՀՊՏՀ ռեկտորը հանգամանորեն անդրադարձավ նաեւ երկամյա կենսագրություն ունեցող համագործակցության ընթացքին, ընդգծեց փոխադարձ այցելությունների, առաջավոր փորձի փոխանակման, համատեղ գիտաժողովների եւ այլ գիտագործնական ուղղվածության միջոցառումների կազմակերպման ու անցկացման կարեւորությունը, ինչպես նաեւ տեղեկացրեց համալսարանի՝ կրթական բարեփոխումների գործընթացում արձանագրած հաջողություններին:

Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորը ուրախությամբ նշեց, որ իրենց համալսարանն ընդգրկվել է աշխարհի լավագույն 500 բուհերի, ԱՊՀ 100 լավագույն կազմակերպությունների շարքում, արժանացել պետական պարգեւների: Այս ձեռքբերումներով հանդերձ, պարոն Կուզնեցովը ասաց, որ կրթական բարեփոխումների, Բոլոնիայի գործընթացի պահանջների առումով իրենք դեռեւս հետ են մնում ՀՊՏՀ-ից եւ շատ բան ունեն ընդօրինակելու՝ միեւնույն ժամանակ ընդգծելով կրթության որակի խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտությունը: Նա կոչ արեց ստեղծելու «Առաջնորդների դպրոց», որի շրջանակներում բարեկամ համալսարանների ուսանողները կամ մեզ մոտ՝ Դիլիջանի մարզաառողջարարական ճամբարում, կամ Հյուսիսային Կովկասի գեղատեսիլ վայրերից մեկում նույնպես հնարավորություն կունենան հաղորդակցվելու եւ առավել մոտիկից ճանաչելու միմյանց, քանի որ, նրա բնորոշմամբ՝ ուսանողն է համալսարանի «գլխավոր մարդը»:

Գիտաժողովի մասնակիցները հնարավորություն ունեցան ունկնդրելու ռուսաստանցի եւ հայ տնտեսագետների դիտարկումները համաշխարհային տնտեսական ճգնաժամի հաղթահարման ու երկու երկրների տնտեսությունների զարգացման հեռանկարների համատեքստում:

Պրոֆեսոր Վիկտոր Օվչիննիկովի «Ռուսաստանի տնտեսության իրավիճակի ախտորոշումը եւ ճգնաժամից դուրս գալու հեռանկարները» թեմայով զեկուցումը կառուցված էր Համաշխարհային բանկի 21-րդ զեկույցի հիման վրա եւ հանգամանորեն վեր էր հանում ճգնաժամի ազդեցությունը Ռուսաստանի տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Մատնանշելով ճգնաժամի հաղթահարման հեռանկարները՝ գիտնականը կանխորոշեց, որ Ռուսաստանի տնտեսությունը միայն 2012 թվականի երրորդ եռամսյակում կթոթափի դրա հետեւանքները:

Միջազգային գիտաժողովը շարունակվեց երկու բաժանմունքում. «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառները, դրսեւորումները եւ ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա» եւ «Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության հակաճգնաժամային ծրագրերը եւ դրանց իրագործման արդյունավետությունը» խորագրերի ներքո:

Ռուսաստանցի գիտնականների հաջորդ այցելությունը Հայաստան նախատեսվում է այս տարվա աշնանը, երբ մեծ շուքով կնշվի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 80-ամյակը: Ի դեպ, Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանն էլ իր 80-ամյա հոբելյանը նշելու է 2011-ին:

Հ.Գ. Գիտակրթական կապերի ամրապնդումը հայաստանյան եւ ռուսաստանյան հեղինակավոր բուհերի միջեւ չի կարող իր դրական հետքը չթողնել հայ-ռուսական հարաբերությունների խորացման եւ զարգացման վրա՝ համոզված է ՌԴ հարավային դաշնային տարածաշրջանում ՀՀ գլխավոր հյուպատոս Արարատ Գոմցյանը: Նրա վկայությամբ՝ այսպիսով աշխուժանում են կրթական եւ ուսանողական կապերը՝ մերձեցնելով երկու ժողովուրդների երիտասարդությանը, ապահովելով համագործակցության շարունակականություն նաեւ մյուս ոլորտներում:

ՀՊՏՀ ռեկտոր Յուրի Սուվարյանի հավաստմամբ՝ այն բազմահազարանոց հայ համայնքը, որ ապրում ու արարում է Հարավային Ռուսաստանում, պահանջ է զգում ավելի մոտիկից հաղորդակցվելու մայր հայրենիքին, հայրենի մշակույթին ու պատմությանը: Բուհական համագործակցության շնորհիվ այդ հարաբերությունները կլինեն ավելի գործնական, ամուր եւ հուսալի:

ՍԱԹԵՆԻԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

AZG NEW PDF.qxd 16/04/2010 21:04 Page 1



# Սիրիայի անկախության 64-րդ տարեդարձը



Ապրիլի 17-ին Սիրիայի ժողովուրդը իր բոլոր տարրերով նշում է ազգային տոնի 64-րդ տարեդարձը՝ առաջադիմական համատարփակ փոփոխությունների ֆոնի վրա, փոփոխություններ, որոնք ընդգրկել են կյանքի բոլոր՝ քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային եւ գիտական բնագավառները:

Սիրիայի ժողովուրդն իր անկախությունը նվաճել է դառը պայքարից հետո, որը տեւել է ավելի քան քառորդ դար, որի ընթացքում ժողովուրդը բազմաթիվ զոհաբերություններ ու նահատակներ է տվել, իսկ 1946թ. ապրիլի 17-ին նվաճեց իր անկախությունը, որն էլ դարձավ Սիրիայի ժողովրդի պայքարի պատմական նոր փուլի սկիզբ:

Սիրիան միաստվածություն դավանող երեք կրոնների բնօրրան է եւ միշտ հանդուրժողականության խորհրդանիշ է եղել, իր պատմության ընթացքում որեւէ մեկի հանդեպ ոտնձգություն չի կատարել, այլ ընդհակառակը՝ ինքն է ենթարկվել հարձակումների եւ օկուպացիայի, իսկ նրա տարածքները մասնատվել են, եւ այդ տարածքներից մի մասը դեռ գտնվում է իսրայելական օկուպացիայի ներքո: Չնայած, Սիրիան ձեռք է մեկնել խաղաղությանը՝ ՄԱԿ-ի գլխավոր ընկերակցության եւ անվտանգության խորհրդի միջազգային իրավունքի որոշումների հիման վրա, այնուհանդերձ իսրայելական կողմը մերժում է ենթարկվել դրանց եւ ձգտում է խաղաղության հասնել՝ շարունակելով օկուպացիան, ինչը հնարավոր չէ:

Սիրիայում, հատկապես 1970-ից ի վեր, մեծ զարգացում է արձանագրվել բոլոր բնագավառներում:

Տնտեսական առումով Սիրիայի տնտեսությունը մարդկային եւ տնտեսական կարեւոր զարգացումների ականատես է եղել, զարգացումներ, որոնք որակական անցում են կատարել տնտեսական ուղղություններում եւ նպաստել են տնտեսական կարողությունների ամրապնդմանը՝ տնտեսության կառուցման մեջ հասարակության բոլոր շերտերի ներդրման շնորհիվ: Իսկ ՍԱՀ նախագահ պարոն Բաշար ալ Ասադի օրոք տնտեսությունը շարունակել է զարգանալ եւ մեծ նվաճումների հասնել՝ տնտեսության կառուցման համատարփակ նախագիծն ամբողջացնելու նպատակով:

Վերջին տարիների ընթացքում Սիրիան մի շարք օրենքներ եւ որոշումներ է ընդունել՝ տնտեսական գործունեության իրականացման եւ բարեփոխումներն ամբողջացնելու նպատակով: Վերոհիշյալ օրենքներից ամենակարեւորներն են. մասնավոր բանկերի օրենքը, արժույթի խորհրդի օրենքը, փողերի լվացման դեմ պայքարի օրենքը, բանկային գաղտնիության օրենքը, դրամական շուկաների եւ արժեթղթերի կառույցի ստեղծման օրենքը եւ ապահովագրական մասնավոր ընկերությունների հիմնադրման օրենքը, ինչպես նաեւ ներդրումների, առեւտրի եւ ընկերությունների մասին օրենքներում կատարված փոփոխությունները:

Գյուղատնտեսական ոլորտում բազմաթիվ օրենքներ են ընդունվել, որոնք նպատակամղված են գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը՝ իր բուսական եւ կենդանական հատվածներով, ինչպես նաեւ գյուղատնտեսական նախատեսված քաղաքականությունների իրականացմանը եւ գյուղատնտեսական արտադրության կարիքների բավարարմանը: Գյուղատնտեսական եւ կենդանական արտադրանքի առումով Սիրիան ինքնաբավարարված երկիր է, որը միեւնույն ժամանակ արտահանում է բազմաթիվ գյուղատնտեսական արտադրանքներ:

Ինչ վերաբերում է արդյունաբերական ոլորտին, ապա սիրիական արդյունաբերությունը հասել է զարգացման բարձր մակարդակի, եւ Սիրիան արտահանում է բազմաթիվ արդյունաբերական արտադրանքներ:

Հասարակական ոլորտում ուշադրության կենտրոնում են եղել քաղաքացիների կենսամակարդակի բարելավումը, զարգացման ցուցանիշների բարձրացումը, ուսումնական ծրագրերի զարգացումը եւ անվճար կրթության ապահովումը, մասնավոր համալսարանների բացումը, որոնց թիվը հասել է 13-ի եւ որոնք բարձրագույն ուսումնական հաստատություններին զուգահեռ նախապատրաստում են զարգացման եւ վերափոխումների համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ: 2008-2009թթ. ուսումնական տարում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների թիվը կազմում էր 132884:

Ինչ վերաբերում է մշակույթի բնագավառին, ապա Սիրիան մեծ կարեւորություն է տվել մշակույթին եւ դրա համընդհանուր տարածմանը, եւ այս նպատակով պետությունը մշակութային համալիրներ է կառուցել, որոնցով Սիրիան հպարտանում է, ինչպիսիք են Օպերայի տունը եւ Ալ-Ասադի գրադարանը: Սիրիայում գործող մշակութային կենտրոնների թիվը գերազանցում է 430-ը, որոնք գտնվում են հայրենիքի բոլոր շրջաններում:

Այս կապակցությամբ հարկ է խոսել Սիրիայի եւ Հայաստանի միջեւ առկա երկկողմանի բարեկամական հարաբերությունների մասին, որովհետեւ այդ հարաբերությունները սիրիացի եւ հայ ժողովուրդների միջեւ բազմադարյան են, իսկ հայերի մի մասը սիրիացի ժողովրդի անբաժանելի մասն է կազմում, եւ հայերը ժողովրդական ժողովում պատգամավոր ունեն: Այս հարաբերությունները մեծ զարգացում ապրեցին նախորդ 2009թ. եւ սույն 2010թ., երբ 2009թ. հունիսին պարոն նախագահ Բաշար Ալ-Ասադը պատմական այց կատարեց Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում ստորագրվեցին երկու համաձայնագիր եւ փոխըմբռնման երեք հուշագիր: Վերոհիշյալ այցից հետո Հայաստանում անցկացվեցին Սիրիայի մշակույթի օրեր, ապա Երեւանում սիրիական ապրանքի ցուցահանդես-վաճառք կազմակերպվեց եւ գումարվեց միջպետական հանձնաժողովի հերթական նիստը:

Նորին Սրբություն Ամենայն հայոց կաթողիկոսը 2009 թ. նոյեմբերին պարոն նախագահ Բաշար Ալ-Ասադի հրավերով այց կատարեց Սիրիա:

Սույն թվականի մարտին Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանը այց կատարեց Սիրիա, այն պատմական եւ հաջող այց էր, որի ընթացքում ստորագրվեցին ինը համաձայնագրեր եւ փոխըմբռնման հուշագրեր, ինչպես նաեւ մեկ գործնական ծրագիր:

Մենք ակնկալում ենք հետագայում սիրիական եւ հայկական կողմից բարձրաստիճան պաշտոնյաների այլ այցեր՝ բոլոր ոլորտներում հարաբերություններն ամրապնդելու եւ ավելի բարձր մակարդակի հասցնելու նպատակով, ինչը պարոն նախագահ Բաշար Ալ-Ասադի հանձնարարականն է:

**ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ՄԱԼԼՈՒՄ**
**Հայաստանում Սիրիայի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար**

# Մեդվեդեւը 2009-ին Օբամայից 50 անգամ պակաս է վաստակել

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի եւ նրա տիկնոջ՝ Միշելի ընդհանուր եկամուտը 2009-ին կազմել է 5,5 մլն դոլար, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Օբամա ամուսինների հարկային հայտարարագիրը հրապարակվել է ապրիլի 15-ին: Փաստաթղթի համաձայն, ընտանիքի եկամուտների մեծ մասը ստացվել է նախագահի հեղինակած գրքերի վաճառքի տոկոսներից: Վերջին տարիներին միայն գրական գործունեության շնորհիվ Օբաման վաստակել է մի քանի միլիոն դոլար:**

**Նաեւ հայտնի է դարձել, որ Բարաք եւ Միշել Օբամաները հարկերի ձեւով երկրի բյուջե են փոխանցել 1,8 մլն դոլար: Բացի դրանից, ընտանիքը 329 հազար դոլար է հատկացրել բարեգործությանը: Այդ գումարից 50 հազարը հատկացվել է CARE մարդասիրական կազմակերպությանը, նույնքան էլ՝ սեւամորթ դեռահասների կրթությունը ֆինանսավորող United Negro College Fund հիմնադրամին:**

**Գործակալությունը հիշեցնում է, որ 2009-ին Օբաման ունեցել է նաեւ չնախատեսված եկամուտներ, որոնցից նա, ի դեպ, հրաժարվել է: Անցյալ տարվա հոկտեմբերին նախագահ Օբաման ստացավ խաղաղության Նոբելյան մրցանակ եւ դրա հետ մեկտեղ՝ դափնեկրին հասանելիք 1,4 մլն դոլարը, սակայն գումարը հատկացրեց բարեգործությանը:**



**Օրերս իրենց եկամուտների մասին հաշվետվություններ էին ներկայացրել նաեւ Ռուսաստանի բարձրաստիճան անձինք: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը անցյալ տարի վաստակել է 3,3 մլն ռուբլի (մոտ 113 հազար դոլար), որը մոտավորապես 50 անգամ պակաս է Օբամաների ընտանիքի եկամուտից: ԱՄՆ նախագահի եկամուտին կարողացել է մոտենալ միայն ՌԴ բնության նախարար Յուրի Տրուտնեւը, որը 2009-ին վաստակել է 155,1 մլն ռուբլի:**

# ՄԱԿ-ը կգործակցի Ղրղզստանի նոր ղեկավարության հետ

## *Բակիեւը հրաժարական է տվել*

**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հայտարարել է, որ իր կազմակերպությունը պատրաստ է համագործակցել Ղրղզստանի նոր իշխանությունների հետ: Բան Կի Մունը ողջունել է միջազգային ուժերի միջնորդությամբ հանրապետության ժամանակավոր կառավարության եւ պաշտոնանկ արված նախագահ Բակիեւի ձեռք բերած համաձայնությունը: Դրա շնորհիվ Ղրղզստանի նախկին ղեկավարը կարողացել է հեռանալ երկրից:**

**Ղրղզստանին մարդասիրական օգնություն հատկացնելու պատրաստակամություն է հայտնել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը:**

**Ժամանակավոր կառավարության ղեկավար Ռոզա Օթունբաեւան երեկ հայտարարել է, որ նոր իշխանություններին հաջողվել է կալանավորել Բակիեւի զինակիցներից մեկին՝ պաշտպանության նախկին նախարար Բակտըբեկ Կալըեւին: Օթունբաեւան ավելացրել է, որ իշխանությունները կշարունակեն բողոքի զանգվածային ելույթների ժամանակ «խաղաղ քաղաքացիների գնդակահարության» համար պատասխանատու անձանց որոնումը:**

**Ներկայումս Ղրղզստանի նախկին նախագահ Կուրմանբեկ Բակիեւը Ղազախստանում է, ուր ժամանել է ռազմօդանավով հինգշաբթի հետմիջօրեին:**

**Ժամանակավոր կառավարության ներկայացուցիչը հայտարարել է, որ պետության տապալված ղեկավարը հինգշաբթի օրը հրաժարվել է նախագահական լիազորություններից:**

**Ղրղզստանից Բակիեւի մեկնելը համաձայնեցվել էր Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Եվրոմիության ղեկավարության հետ: Բանակցություններին ակտիվորեն մասնակցել էին նաեւ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի ներկայացուցիչները:**

**Ինտերֆաքս գործակալության տվյալներով, Բակիեւը կարող է մեկնել Թուրքիա կամ Լատվիա: Ինքը՝ Բակիեւը ավելի վաղ ասել էր, որ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն իրեն քաղաքական ապաստան է առաջարկել:**

**Բակիեւի հետ մեկտեղ Ղրղզստանից հեռացել են նրա կինը եւ երկու զավակները: Մյուս հարազատները մնացել են երկրում: «Ազգը» արդեն գրել է, որ ավելի վաղ Ղրղզստանի ժամանակավոր կառավարությունը վերացրել էր Բակիեւի նախագահական անձեռնմխելիությունը:**

**Ղրղզստանի ժամանակավոր կառավարության առաջին փոխվարչապետ Ալմազբեկ Աթամբաեւը Թուրքիայում հայտարարել է, որ Ղրղզստանում ստեղծվելու է իշխանության խորհրդարանական համակարգ:**

# Մեդվեդեւը չի բացառում «ղրղզական տարբերակն» ԱՊՀ այլ երկրներում

**«Եթե ԱՊՀ այլ երկրներում վարվի այն քաղաքականությունը, որը տանում էր Ղրղզստանի նախագահը, ապա այդ երկրի իրավիճակը կկրկնվի տվյալ երկրներում», հայտարարել է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը: ՌԴ նախագահը նաեւ հավելել է, որ «ղրղզական տարբերակը» հնարավոր է այն երկրներում, որտեղ ժողովուրդը դժգոհ է իշխանություններից, իսկ վերջիններս չեն էլ փորձում քայլեր ձեռնարկել՝ ժողովրդին աջակցելու ուղղությամբ եւ լուծել առավել կարեւոր հարցերը: «Ղրղզական տարբերակը» կարող է լինել ամենուր եւ այնժամ, երբ իշխանությունը կկորցնի կապը ժողովրդի հետ», եզրափակել է Դմիտրի Մեդվեդեւը:**

# Միջազգային հանձնաժողովը Բհուտտոյի մահվան համար մեղադրում է Պակիստանի իշխանություններին



Պակիստանի իրավապահ մարմինները եւ դաշնային իշխանությունները չեն կարողացել ապահովել երկրի նախկին վարչապետ Բենազիր Բհուտտոյի անվտանգության պատշաճ մակարդակ, ինչը 2007-ի դեկտեմբերին նրա սպանության անուղղակի պատճառն է դարձել: Այս հետեւությունն է արվում նախկին վարչապետի մահվան հանգամանքները հետաքննող ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովի հաշվետվության մեջ:

Ֆրանսպրես գործակալությունը մեջբերում է հաշվետվության այն մասը, ըստ որի Բհուտտոյի սպանությունը հնարավոր կլիներ կանխել, եթե Պակիստանի ոստիկանությունը եւ իրավասու մարմինները նրա անվտանգության ապահովմանն ուղղված «համապատասխան միջոցներ» ձեռնարկած լինեին: Այս կապակցությամբ հանձնաժողովի անդամները եզրակացրել են, որ պատահածի համար պատասխանատվություն են կրում «դաշնային իշխանությունները, Փենջաբի նահանգի կառավարությունը եւ Ռավալպինդի քաղաքի ոստիկանությունը»:

Հանձնաժողովի պնդման համաձայն, հիշյալ կառույցները տեղյակ են եղել Բհուտտոյին սպառնացող վտանգին, բայց որեւէ համապատասխան գործողություն չեն ձեռնարկել: Հետաքննության մասնակիցները պարզել են, որ նախկին վարչապետին հասցեագրված սպառնալիքներին տեղյակ է եղել Պակիստանի նախագահ Փերվեզ Մուշարաֆը, սակայն հարկ չի համարել ճիշտ արձագանքել իրավիճակին:

Ավելին, նախկին վարչապետի սպանության քննությունը նույնպես եղել է անարդյունավետ, եւ հանցագործության կազմակերպիչները փաստորեն այդպես էլ չեն հայտնաբերվել: Միջազգային հանձնաժողովը հատկապես ընդգծել է, որ Պակիստանի իրավապահ մարմինների գործողությունների անարդյունավետությունը համարում է կանխամտածված:

ՄԱԿ-ի հետաքննության մասնակիցները նաեւ նշել են, որ հանձնաժողովի աշխատանքը դժվար է ընթացել պակիստանցի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների եւ տեղական հատուկ ծառայությունների աշխատակիցների հակազդեցության պատճառով:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ միջազգային հանձնաժողովի ղեկավարը ՄԱԿ-ում Չիլիի ներկայացուցիչ Էրալդո Մունյոսն է: Հանձնաժողովը աշխատանքն սկսել է 2009-ի հուլիսի 1-ին:

AZG NEW PDF.qxd 16/04/2010 20:59 Page 1



# Վլադիմիր Կլիչկոն մարտահրավեր է նետել Հեյին

WBO-ի եւ IBF-ի վարկածներով գերծանր քաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն եթերով ուղերձ է հղել WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դեւիդ Հեյին՝ հրավիրելով մենամարտի:

«Ես Վլադիմիր Կլիչկոն եմ եւ ուղերձ եմ հղում բռնցքամարտի բոլոր սիրահարներին ու անձամբ Դեւիդ Հեյին: Դեւիդ, դու արդեն երկու անգամ խուսափել ես Կլիչկո եղբայրների հետ մենամարտելուց: Եկել է ժամանակն անցկացնելու այդ մենամարտը: Ես պաշտոնապես մարտահրավեր եմ նետում քեզ: Դու չես կարող մշտապես փախչել ինձանից: Քեզ իսկական մենամարտ է անհրաժեշտ, որպեսզի հարգանք վայելես: Ես պատրաստ եմ: Ինչի՞ն ես սպասում», հայտարարել է Վլադիմիր Կլիչկոն:



Հիշեցնենք, որ Դեւիդ Հեյը Կլիչկոյի հետ պետք է հանդիպեր 2009-ի հունիսին, սակայն հրաժարվեց, պատճառաբանելով, թե իբր վնասվածք է ստացել: Ըստ ոչ պաշտոնական վարկածի, նա հրաժարվել էր ռինգ դուրս գալ ֆինանսական դրդապատճառներով: Բրիտանական հեռուստաընկերություններից մեկը, որ պետք է ապահովեր մրցանակային հիմնադրամի մի մասը, ֆինանսական խնդիրների առաջ էր հայտնվել: Դրանից հետո Հեյը պայմանավորվել էր Վիտալի Կլիչկոյի հետ, սակայն որոշ ժամանակ անց հրաժարվել էր:

Վլադիմիր Կլիչկոն իր վերջին մենամարտն անցկացրել է այս տարվա մարտին՝ 12-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով Էդի Չեմբերսին եւ պաշտպանելով իր տիտղոսները: Նշենք, որ Կլիչկոյի հերթական մրցակիցը պետք է լինի Ալեքսանդր Պովետկինը, սակայն Հեյը մտադիր է նրան 600 հազար եվրո առաջարկել Կլիչկոյի հետ մենամարտելու իրավունքն իրեն զիջելու համար:

Ի պատասխան այդ ուղերձի, Դեւիդ Հեյը հայտարարել է, որ իր գլխավոր նպատակն աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսի նվաճումն է: Իսկ դրա համար նա խորհուրդ է տվել Կլիչկոներին մրցել միմյանց հետ, որոշել հաղթողին, որի հետ ինքը կմենամարտի. «Ինձ համար միեւնույն է, թե նրանք որտեղ կմենամարտեն՝ ռինգո՞ւմ, թե՞ իրենց բակում: Հաղթողը կմենամարտի ինձ հետ: Սակայն եթե նրանք չեն ցանկանում վրդովեցնել իրենց մորը, ապա եղբայրներից մեկը թող իր տիտղոսը տա մյուսին, որի հետ էլ կմենամարտեմ աշխարհի բացարձակ չեմպիոնի կոչման համար»:

Փաստորեն, Դեւիդ Հեյն այս անգամ էլ փորձում է նման կերպով խուսափել մենամարտից՝ քաջ գիտակցելով, որ Կլիչկո եղբայրները երբեք միմյանց դեմ ռինգ դուրս չեն գա:

Բնականաբար Վլադիմիր Կլիչկոն չէր կարող չպատասխանել Դեւիդ Հեյին, որը ժամանակին շատ է վիրավորական արտահայտություններ թույլ տվել ուկրաինացի բռնցքամարտիկի հասցեին. «Ցանկանում եմ ոչնչացնել նրան ռինգում: Մտադիր եմ նրան պատժել բոլոր 12 ռաունդների ընթացքում, իսկ վերջում նոկաուտի ենթարկել: Թեեւ չեմ կարծում, թե կարող եմ ինձ զսպել եւ ավելի շուտ նրան նոկաուտի չենթարկել: Եկել է ժամանակը լռեցնելու Հեյին, փակելու նրա կեղտոտ բերանը: Չեմ կասկածում, որ նա նախկինում պարզապես խուսափել էր իմ հետ հանդիպումից՝ պատճառաբանելով վնասվածքը: Նա պարզապես ստախոս է ու վախկոտ: Եթե այս անգամ էլ վախենա եւ իմ դեմ ռինգ դուրս չգա, ապա կմենամարտեմ Ալեքսանդր Պովետկինի հետ: Մեզ՝ եղբայրներիս ոչինչ չի ստիպի միմյանց դեմ ռինգ դուրս գալ: Թերեւս միայն մի դեպքում է դա հնարավոր: Ասենք, եթե աշխարհի փրկությունը կախված լինի միայն մեր մենամարտից»:

# «Փոքրիկ գեներալը» կփոխարինի Գուս Հիդինքին

Բելգիական Nieuwsblad թերթի տեղեկացմամբ Դիկ Ադվոկատը կնքել է պայմանագիրն այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ, որպեսզի գլխավորի Ռուսաստանի հավաքականը: Բելգիայի հավաքականը նա գլխավորում էր անցյալ տարվա հոկտեմբերից: Ըստ բելգիական լրատվամիջոցի, Ադվոկատի այդ քայլը պայմանավորված է ֆինանսական դրդապատճառներով: Նա Բելգիայում տարեկան 600 հազար եվրո էր ստանում, մինչդեռ Ռուսաստանում նրան խոստացել են 12 մլն եվրո: Ճիշտ է, ըստ «Սովետսկի սպորտի», Ադվոկատի իրական աշխատավարձը կկազմի տարեկան մոտ 5 մլն եվրո: Նա 2+2 տարբերակով պայմանագիր կկնքի Ռուսաստանի ֆուտբոլային միության հետ: Պաշտոնապես նա հանրությանը կներկայացվի մայիսի 17-ին Ռուսաստանի ֆուտբոլային միության համաժողովի ժամանակ: Հավաքականի մարզչական կազմում կլինեն նաեւ Բերտ վան Լինգենը, որն Ադվոկատի հետ աշխատել է «Զենիթում», ինչպես նաեւ Ալեքսանդր Բորոդյուկը:

Բելգիացիները խիստ մտահոգված են Ադվոկատի քայլից, քանի որ հույս ունեին «Փոքրիկ գեներալի» հետ Եվրո-2012-ի ուղեգիր նվաճել: Ըստ բելգիական լրատվամիջոցի, պայմանագրի կնքման գործում մեծ է ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի դերը, որը բարձր որակավորում ունեցող իրավաբանների էր հանձնարարել զբաղվել Ադվոկատի գործով: Ի դեպ, պայմանագրի ժամկետից շուտ կնքման համար Ռուսաստանի ֆուտբոլային միությունը Բելգիայի ֆեդերացիային 1 մլն եվրո փոխհատուցում կվճարի:

# Բերբատովը հարկավոր չէ «Մանչեսթր Յունայթեդին»



«Մանչեսթր Յունայթեդի» ղեկավարությունը փորձում է վաճառել Դիմիտար Բերբատովին: Վերջինիս համար անգլիական ակումբը 2008-ին «Տոտենհեմին» ռեկորդային գումար՝ 30,75 մլն ֆունտ ստեռլինգ էր վճարել: Վերջին երկու խաղերում ցուցադրած խաղը վերջնականապես լցրեց թիմի երկրպագուների համբերության բաժակը: Ալեքս Ֆերգյուսոնն էլ արդեն կորցրել է հավատը ֆուտբոլիստի նկատմամբ:

Վերջին շրջանում Բուլղարիայի հավաքականում Բերբատովի ելույթներից դժգոհում են նաեւ բուլղարացի ֆուտբոլասերները: Եթե հաջողվի վաճառել Բերբատովին, ապա հնարավորություն կընձեռվի նոր ֆուտբոլիստներ գնել: Ալեքս Ֆերգյուսոնը ցանկանում է ամռանն ուժեղացնել թիմի կազմը՝ հրավիրելով Դավիթ Վիյյային, Քարիմ Բենզեմային, Մանուել Նոյերին: Բերբատովի համար անգլիական ակումբը մտադիր է 25 մլն ֆունտ ստեռլինգ պահանջել:

# Իսինբաեւան ժամանակավորապես հեռանում է սպորտից

Ռուսաստանցի ձողացատկորդուհի, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոնուհի, աշխարհի բազմակի ռեկորդակրուհի Ելենա Իսինբաեւան որոշել է անորոշ ժամանակով ընդմիջել ելույթները:

«Վերջին երեք շաբաթների ընթացքում եկա այն եզրակացության, որ ինձ հանգիստ է պետք: 8 տարվա լարված մարզումներից ու ծանր մրցումներից հետո հարկավոր է վերականգնել ուժերը: Առայժմ չեմ կարող ստույգ ասել, թե երբ կվերսկսեմ մարզումները: Չեմ բացառում Բարսելոնում կայանալիք Եվրոպայի առաջնությանը մասնակցելու հնարավորությունը», հայտարարել է Իսինբաեւան:

Մարտին Դոհայում կայացած թեթեւ աթլետիկայի աշխարհի ձմեռային առաջնությունում Իսինբաեւան անհաջողության մատնվեց՝ գրավելով միայն 4-րդ տեղը: Հենց դա էլ մարզուհուն ստիպեց ընդմիջում վերցնել: Հնարավոր է, որ Իսինբաեւան վերադառնա մեծ սպորտ, որպեսզի մասնակցի 2012-ի Լոնդոնի օլիմպիադային եւ 2013-ի աշխարհի ամառային առաջնությանը:

ԹԵՆԻՍ

# Նալբանդյանը շարունակեց հաղթարշավը

**Դավիթ Նալբանդյանը Մոնտե Կառլոյի թենիսի մրցաշարում իր 3-րդ հաղթանակը տոնեց եւ մտավ քառորդ եզրափակիչ: Հերթական խաղում նա պարտության մատնեց իսպանացի Թոմի Ռոբրեդոյին (6-3, 6-4): Քառորդ եզրափակիչում նա կմրցի սերբ Նովակ Ջոկովիչի հետ: Վերջինս պայքարից դուրս էր մղել Ստանիսլաս Վավրինկային (6-4, 6-4): Քառորդ եզրափակիչ են մտել նաեւ Մոնտանյեսը, Վերդասկոն, Ֆեռերը, Կոլշրայբերը, Ֆեռերոն եւ Նադալը:**

# Վանիկ Զաքարյանը վճռաբեկ հանձնաժողովի անդամ

**Շախմատի համաշխարհային հերթական օլիմպիադան տեղի կունենա այս տարվա սեպտեմբեր-հոկտեմբերին Ռուսաստանի Խանտի Մանսիյսկ քաղաքում: ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովի հրամանով շախմատի Հայաստանի ֆեդերացիայի պատվավոր նախագահ, ՖԻԴԵ-ի պատվավոր փոխնախագահ Վանիկ Զաքարյանը նշանակվել է օլիմպիադայի վճռաբեկ հանձնաժողովի անդամ:**

# «Պոբեդայի» որակազրկումը հաստատվել է

**Մարզական իրավարար դատարանը հաստատել է ՈւԵՖԱ-ի որոշումը, որով մակեդոնական «Պոբեդան» 2009/10-ի մրցաշրջանից սկսած 8 տարով զրկվել է եվրոգավաթների մրցաշարերին մասնակցելու իրավունքից: ՈւԵՖԱ-ն նման վճիռ էր կայացրել անցյալ տարվա մայիսի 27-ին:**

**Հիշեցնենք, որ ՈւԵՖԱ-ին հաջողվել էր ապացուցել 2004-ի հուլիսի 13-ին եւ 21-ին «Փյունիկի» հետ կայացած չեմպիոնների լիգայի հանդիպումների պայմանավորված լինելը: Իրավարար դատարանը նաեւ հաստատել է «Պոբեդայի» նախագահ Ալեքսանդր Զաբրչանեցի ցմահ որակազրկման որոշումը:**

# Ռոբերտո Կառլոսը ցանկանում է օգնել թիմակիցներին



**2002-ի աշխարհի չեմպիոն, բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռոբերտո Կառլոսը, որն օրերս նշեց 37-ամյակը, ցանկություն է հայտնել վերադառնալ ազգային հավաքական եւ օգնել թիմակիցներին Հարավաֆրիկյան Հանրապետությունում կայանալիք աշխարհի առաջնությունում հաջողության հասնելու:**

**Ժամանակին Միլանի «Ինտերում», Մադրիդի «Ռեալում» եւ թուրքական «Ֆեներբահչեում» հանդես եկած Ռոբերտո Կառլոսը 2009-ի դեկտեմբերից խաղում է հայրենիքում՝ բրազիլական «Կորինթիանսում»: Նա այս թիմում էլ իրեն լավ է դրսեւորում, ուստի բրազիլական լրատվամիջոցներն արդեն խորհուրդ են տալիս Դունգային Կառլոսին կրկին ընդգրկել հավաքականի կազմում:**

**«Շնորհակալ եմ լրագրողներից, որոնք բարձր են գնահատում իմ խաղը: Սակայն վերջնական խոսքը Դունգայինն է: Գիտեմ, որ հիանալի մարզավիճակում եմ գտնվում: Իմ դիրքում ազգային հավաքականում կարող են խաղալ Միչելը, Ժիլբերտոն, Մարսելոն եւ Անդրե Սանթոսը: Թեեւ 37 տարեկան եմ, սակայն հսկայական փորձն ինձ առավելություն է տալիս մյուսների հանդեպ: Վստահ եմ ուժերիս եւ կարծում եմ, որ կարող եմ օգտակար լինել Բրազիլիայի հավաքականին աշխարհի առաջնությունում», նշել է Ռոբերտո Կառլոսը:**

**Բրազիլացի ֆուտբոլիստը մասնակցել է աշխարհի 3 առաջնության: 1998-ին Ֆրանսիայում կայացած աշխարհի առաջնությունում նա արժանացել է արծաթե մեդալի: 2002-ին Ճապոնիայում եւ Կորեայում կայացած մրցաշարում Կառլոսը նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ ահա 2006-ին Գերմանիայում անցկացված աշխարհի առաջնությունն անհաջող էր բրազիլացիների համար, որոնք քառորդ եզրափակիչում զիջեցին ֆրանսիացիներին:**

# Լոնդոնում նոր ռեկորդ կսահմանվի

Լոնդոնում 2012-ին կայանալիք ամառային օլիմպիական խաղերը համաշխարհային սպորտի խոշորագույն ստուգատեսի պատմության մեջ կլինեն «ամենամաքուրը»: Այս մասին հայտարարել է խաղերի կազմկոմիտեն: Օլիմպիադայի ընթացքում նախատեսվում է դոպինգ ստուգման ենթարկել 5000 մարզիկների: 1200 մարզիկ էլ ստուգման կենթարկվեն պարաօլիմպիադայի մասնակիցներից: Լոնդոնի օլիմպիադայի կազմկոմիտեն համագործակցության պայմանագիր է կնքել Մեծ Բրիտանիայի հակադոպինգային գործակալության հետ: Իսկ հետազոտումը կկատարվի ՄՕԿ-ի հովանու ներքո:

Կազմկոմիտեի մարզական տնօրեն Դեբի Ջեւնսը նշել է, որ նման խիստ միջոցների կիրառելը պայմանավորված է այն բանով, որպեսզի օլիմպիական խաղերի ժամանակ դոպինգի օգտագործման հետ կապված սկանդալային պատմություններ չծագեն:

Մեծ Բրիտանիայի հակադոպինգային գործակալությունը մինչեւ օլիմպիական խաղերի մեկնարկը համապատասխան քանակի մասնագետներ կպատրաստի ու իր վրա կվերցնի անհրաժեշտ աշխատանքների 10 տոկոսից ավելին:

Նշենք, որ մինչ օրս դոպինգ ստուգումների քանակով ռեկորդը պատկանում է Պեկինի օլիմպիական խաղերին, որտեղ 4500 անալիզ էր վերցվել: Դրանցից 20-ը դրական արդյունք էր տվել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 16/04/2010 22:22 Page 1





Ժամանակակից արվեստի թանգարանի երեկվա մարդաշատությունը տեղի հասնող հետաքրքրություն էր բորբոքում` ապակիներից այն կողմ երեւացող գույնի խորհրդի հանդեպ: Զարմանալի մի սրահում, որ դեռեւս փակ ցուցափեղկերից անդին համակել էր տարբեր սերունդների ու տարբեր զբաղմունքի մարդկանց: Սա մեր ենթագիտակցության մեջ թաքնված կարոտի սաղարթներն են, որ ձայնում, դեպի իրենց են կանչում աշխարհի մերկության մեջ բացվող գեղեցկությունները:

...Ցուցափեղկերից երեւացող ցուցահանդեսային մի հատված ընկղմ-

բնորոշ է այդ հայացքը, այդ արտահայտությունը: 60-ականներին ամենաինքնատիպ գեղագիտական մտածողություն ու արտահայտություն հայ մշակույթ ներբերած երեք կերպարվեստագետների` **Ռոբերտ Էլիբեկյանի, Արա Շիրազի** եւ **Էդուարդ Խառազյանի** վերջին տասը տարիների ստեղծագործությունների այս շատ ուշագրավ մեկտեղումն արդի արվեստի թանգարանի սրահներում, ունի մեկ այլ խորհուրդ. Ժամանակակից արվեստի թանգարանի հիմնադիրի, հայ գեղանկարչության 60-ականների շարժման հենարան, նեցուկ, պահապան` Հենրիկ Իգիթյա-

Անսովոր ու նոր էին շատերիս համար Արա Շիրազի քանդակային մոտեցումները` ոչ միայն ձեւի, կաղապարի, այլեւ օգտագործված նյութի տեսանկյունից:

Անակնկալ շքեղ է Էդուարդ Խառազյանի աշխարհընկալումը. գույնի զարմանալի խորքայնության մեջ մերթընդմերթ առկայծող պատկերների լուսե բեկումներով. նրա գունային մտածողությունը ներքնազգացողության բարդ շերտեր է բացում` անդերկրայինի շարունակություն, որտեղ լույսի արտաբեկումը ենթարկվում է այլ օրենքների...

Այս ամենի մասին` ավելի ուշ` մեր

# Գունային խրախճանք` նաեւ սահմանից այնկողմնային

## Ցուցահանդես Հենրիկ Իգիթյանի հիշատակին



Ռոբերտ Էլիբեկյան. «Դերասանուհի», 2001 թ.

ված է տոնահանդեսի «տարազային» աշխարհի մեջ, դահլիճը անխառն, մաքուր լռության մեջ ընկղմված, ասես վերծանում է գույնի առեղծվածը` լույսի արտերկրյա մարմինը, որը աստիճանաբար կլանում, տանում է միտքդ սրահի չերեւացող կողմը:

Նախամուտքի պատին Հենրիկ Իգիթյանի մեծադիր լուսանկարը հետեւում է անցուդարձին, ընթացքին, մարդկանց սպասումին. իրեն շատ

նի մահվան առաջին տարելիցին նվիրված:

Եվ, բնականաբար, այս մարդաշատությունը սպասելի էր. արվեստասեր, մտավորական հանրության համար վաղուց արդեն ընդունված ու սիրելի ստեղծագործողներ` իրենց շուրջը ձեւավորված միջավայրով, գեղարվեստական մտածողության բարձր չափանիշներով ու դրսեւորումներով, եւ այս նվիրումը` Հենրիկ Իգիթյանի հիշատակին, ցուցահանդեսին նրա ներկայության խորհուրդն էր բերում: Եվ սա է ամենահուսադրողը, ստեղծագործական մտածողության այս շարունակությունը, ինչը հանդիսականի այսպիսի բազմաքանակություն ու բազմազանություն էր ապահովել. ներկա էին արվեստաբաններ, գրողներ, երաժշտության, թատրոնի, պարարվեստի աշխարհի անվանի մարդիկ, երիտասարդներ, ուսանողներ: Ցուցասրահներում ցնծություն էր տիրում, գույնի անձրեւ` գեղեցկությամբ ներծծված, լույսի տոն:

Սրահների պատերը չափից ավելի ծանրաբեռ էին, գույնի առատությամբ. Ռոբերտ Էլիբեկյանի կանաչն ուղղակի հիասքանչ է, զարմանալի կենսական, միաժամանակ առեղծվածային, միստիկ: Ասես աշնանային այգիների վառվռուն, վետվետուն բար ու բարիք. այս նկարներից շատերն ակամա մտաբերել են տալիս Դ. Վարուժանի «Ով Լալագեն»:



Արա Շիրազ. «Էդուարդ Խառազյան», 1971

տրամադրությունների ու տեսողությունների ավելի հանդարտ վիճակով: Իսկ ավելի անկեղծ` հոգուս խորքում չէի էլ ուզում, որ ներս մտնենք այդ` ասես ծաղկած պարտեզի կուսական լռության մեջ, ուր գույնն իր ծննդի հետ զրույցի էր բռնվել եւ կարծես կարիք չուներ օտար միջամտության:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

**Հ. Գ.** Զարմանալին` հասարակության մեջ այսպիսի հետաքրքրություն առաջացրած ցուցահանդեսի առիթով կազմակերպված մամուլի ասուլիսին «**Ազգից**» բացի որեւէ այլ լրատվամիջոցի ներկա չլինելն էր. աբսուրդ է, չէ՞, բայց ավելի շուտ մեր իրականության հոգեւոր աղքատացման ակնհայտ վկայություն:

# Քննարկվեցին սփյուռքում արեւմտահայերենի ուսուցման հիմնահարցերը

Երեկ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** կլոր սեղան-քննարկման էր հրավիրել հանրապետության բուհերի ամբիոնի վարիչների, արեւմտահայերենին տիրապետող դասախոսների, մասնագետների: Նախարարը քննարկումից առաջ տեղեկացրեց, որ հուլիսի 3-5-ը իրենց կողմից կազմակերպվող «Արեւմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» գիտագործնական խորհրդաժողովին ընդառաջ կազմակերպվող այս քննարկումը, շատ հարցերի լուծման ուղին ու բանալին կտա: Ներկաները իրար լրացնելով վերհանեցին այն ծառացած հարցերը, որ այսօր սփյուռքի տարբեր համայնքներում հրատապ լուծման ու աջակցության կարիք ունեն: Արեւմտահայերենի ուսուցման արդի վիճակը սփյուռքում, եւ արեւմտահայերենի ուղղագրությունը եւ դրա կանոնակարգման խնդիրը, ուսուցմանն առնչվող հիմնախնդիրները, ծրագրերը եւ դրանց բարեփոխումների անհրաժեշտությունը, արեւմտահայերենի դասագրքերի, վերլուծությունը եւ փոփոխությունների անհրաժեշտությունը եւ նման թեմաներն էին կլոր սեղան-քննարկման հիմնական նյութը: Նշվեց, որ սփյուռքում այժմ գործող 78 լեզվագիտական կենտրոն, ամբիոն, արեւելագիտության դասընթացներ անցկացնող ուսումնական հաստատություններում եւ դպրոցներում, պարզ չէ, թե ինչպե՞ս եւ ի՞նչ մասնագետներ են դասավանդում ու դա այսօր շատ լուրջ խնդիր է... Բազմաթիվ առաջարկներ գրառվեցին նախարարի կողմից եւ տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

«**Ազգը**» քննարկումից հետո խնդրեց տիկին Հրանուշ Հակոբյանին ամփոփել կլոր սեղանի աշխատանքները: «Մեր մասնագետների ու գիտնականների տեսակետներից ակնհայտ է, որ մենք արեւմտահայերենի ուսուցման հետ կապված խնդիրներ ունենք: Ես կարծում եմ, որ ամենակարեւոր խնդիրը արեւմտահայերենի ուսուցիչների բարձրագույն կրթության պատրաստման բաժին բացելն է: Իսկ երկրորդ կարեւոր խնդիրը` մեր գիտնականները հասկա-



ցան, որ մենք համաժողովը հրավիրում ենք համատեղ ուժերով դասագրքեր ստեղծելու, հասկանալու, թե ինչ վիճակում է արեւմտահայերենի ուսուցման խնդիրը:

Ինձ համար հայ է այն մարդը, ով իրեն զգում է հայ, բայց լեզվամտածողությունն ու մայրենիի պահպանումը դա հարցերի հարցն է այսօր սփյուռքում»: Քննարկումից անմիջապես հետո նախարարը հանդիպեց բուհերի երիտասարդական խորհուրդների եւ կուսակցությունների երիտասարդական թեւերի պատասխանատուների հետ ու նրանց հորդորեց «Մայրենիի տարվա» շրջանակներում մի քանի ծրագրեր իրականացնել ու շեշտեց. «Դո՛ւք եք եւ դո՛ւք պետք է լինեք մայրենի լեզվի կրողներն ու պաշտպանները, դո՛ւք պիտի լինեք լեզուն փոխանցողը...»: Հանդիպումների ավարտին նախարարը հրավիրեց բոլորին` մասնակցելու ապրիլի 20-ին ժամը 11-ին կայանալիք «Մշակութային եղեռն» գիտաժողովի աշխատանքներին, որը անցկացվում է Ցեղասպանության թանգարանի հետ համատեղ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Միջդպրոցական օլիմպիադա

## (Վահան Թեքեյան. «Քեզ` հայ լեզու, կըսիրեմ մըգաստանի մը նման»)

«Թեքեյան կենտրոն» հիմնադրամը 2001-ից սկսել է իր գործունեությունը` նպատակ ունենալով սատարել ԹՄՄ հայաստանյան եւ Սփյուռքի կառույցներին, իրականացնելով մշակութային, կրթական եւ սոցիալական ծրագրեր: Ապրիլի 14-16-ը առաջին անգամ հիմնադրամը կազ-



մակերպել է միջդպրոցական օլիմպիադա հայոց լեզու եւ գրականություն եւ մաթեմատիկա առարկաներից: Օլիմպիադային մասնակցում են Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբիի Վահան Թեքեյանի անունը կրող դպրոցների ու կրթօջախների 8-րդ դասարանի աշակերտները:

Երեկ հանդիսավոր պայմաններում «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի ընտրած մասնագիտական ժյուրին ամփոփեց օլիմպիադայի արդյունքներն ու հաղթողներին հանձնվեցին պատվոգրեր, նվերներ: Հայոց լեզու եւ գրականություն առարկայից առաջին մրցանակին արժանացավ Էլյա Հարությունյանը (Կարբի), երկրորդին` Աննա Մարտիրոսյանը (Գյումրի), երրորդը բաժին հասավ Դիանա Նանյանին (Կարբի): Մաթեմատիկա առարկայից առաջին մրցանակին արժանացավ Միսակ Պողոսյանը (Երեւան), երկրորդին` Ռոման Աբաջյանցը (Ստեփանավան), իսկ երրորդ տեղը գրավեց Կարո Հովհաննիսյանը Կարբիից:

Եվս 15 մասնակիցներ արժանացան պատվոգրերի եւ խրախուսական մրցանակների: Ինչպես նշեցին ժյուրիի անդամները, 64 մասնակիցներից ոչ մեկը բացասական գնահատական չէր ստացել: Միջոցառումը եզրափակվեց Թեքեյանի անվ. դպրոցների տնօրենների խոսքով, նաեւ` Կարբիի դպրոցի երգչախմբի համերգով:

Ս. Ս.

ԼՈՒՐԵՐ

# Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրը` ապրիլի 18-ին

Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ) առաջարկությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1983-ից ապրիլի 18-ը նշում է որպես Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օր: Այն այս տարի նշվում է «Գյուղատնտեսական ժառանգություն» խորագրի ներքո:

Այդ օրվա ընթացքում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում տեղի կունենա միջոցառումների շարք, որին կմասնակցեն եւ ելույթներ կունենան թանգարանի տնօրեն, ԻԿՕՄՕՍ/Հայաստանի նախագահ Գագիկ Գյուրջյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ արտգործփոխնախարար Արման Կիրակոսյանը, Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի մշտական համակարգող Դաֆինա Գերչեւան, ՀՀ գյուղփոխնախարար Սամվել Ավետիսյանը եւ ուրիշներ:

«Հուշարձանների լուսանկարման միջազգային փորձ-2009» լուսանկարչական մրցույթի դափնեկիրներին այդ օրը կհանձնվեն միջազգային դիպլոմներ: Իսկ թանգարանի ժամանակավոր ցուցասրահում կբացվի «Ուրարտուից Երեւանի գարեջուր» ցուցահանդեսը:

Միջոցառման կազմակերպիչները թանգարանի տարածքում այդ օրը կազմակերպում են նաեւ գարեջրի, գինու եւ գյուղմթերքների համտես` «Երեւանի գարեջուր» ՓԲԸ-ի եւ «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ:

Իսկ միջոցառումների գեղարվեստական մասը կուղեկցվի «Բերդ» պարային համույթի ելույթներով:

Ս. Ս.

# Տաղանդավոր հայ պատանիների ելույթը Քարնեկի Հոլում

**Հակոբ Վարդիվառյանը** Նյու Յորքից տեղեկացնում է, որ Ամերիկայի Երիտասարդական մշակութային կազմակերպությունը ապրիլի 5-ին Քարնեկի Հոլում կազմակերպել էր համերգ հայ պատանիների մասնակցությամբ: Նախաձեռնությանը աջակցել էին Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) վարչականներ բժիշկ Սվետլանա Ամիրխանյանը եւ Զարմինե Պողոսյանը: Միջոցառմանը նաեւ ներկա են եղել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) վարչականներ, բարերարներ ու արվեստասերներ: Համերգի ժամանակ ելույթ են ունեցել «Արեգակ» մանկական եւ Սրբոց Նահատակաց վարժարանի երգչախմբերը, ինչպես նաեւ անհատ կատարողներ:

# «Շուշի» պարախումբը Նյու Յորքում

Վերջերս Նյու Յորքի հայաշատ համայնքում հրաշալի ելույթով հանդես եկավ առաջնորդարանի «Շուշի» պարախումբը` տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հայկական դպրոցի նախաձեռնությամբ: Նյու Յորքից **Հակոբ Վարդիվառյանը** տեղեկացնում է, որ պարախումբն իր կատարումներով հիացրել է շուրջ ութ հարյուր ներկաներին: Պարախմբի պատասխանատուն ու պարուսույցը Սեդա Գանթարճյանն է: «Շուշին» պատրաստվում է ելույթներով հանդես գալ նաեւ Ամմանում, Դամասկոսում, Հալեպում ու Բեյրութում:

Ի. Պ.

AZG NEW PDF.qxd 16/04/2010 22:33 Page 1



# «Ո՛չ թանկացումներին»՝ ՀԱԿ-ի երթն ու հանրահավաքը

Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ) երեկ կազմակերպել էր իր հերթական երթն ու հանրահավաքը՝ ուղղված գազի սակագնի բարձրացման դեմ: Մասնակիցները՝ մի քանի 100 հոգի, սկզբում հավաքվել էին Գարեգին Նժդեհի հրապարակում: ՀԱԿ-ը գազի սակագնի բարձրացման դեմ հայց է ներկայացրել դատարան, 7230 քաղաքացի միացել են հայցին:

Չնայած հայցն արդեն ընդունվել է Վարչական դատարանի կողմից, սակայն ՀԱԿ-ի համակարգող **Լեւոն Զուրաբյանը** հանրահավաքի ժամանակ ասաց, որ օրենքի կոպտագույն խախտում է կատարվել:

«Վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝ այն գործերը, որոնք ունեն հասարակական մեծ հնչեղություն, պետք է քննվեն բանավոր ընթացակարգով, սակայն Վարչական դատարանը, խախտելով օրենքը, որոշել է այս գործը քննել գրավոր ընթացակարգով», ելույթի ժամանակ նշեց Լեւոն Զուրաբյանը:

Ըստ Լ. Զուրաբյանի՝ գազի սակագնի բարձրացումը ծանր հարված է հասցրել ամբողջ բնակչությանը եւ առաջացրել գների շղթայական բարձրացում, եւ հիմա ՀՀ իշխանությունները վախենում են հայցի հրապարակային դատաքննությունից:

Հանրահավաքից հետո մասնակիցները ոտքով շարժվեցին մինչեւ Վարչական դատարան, որպեսզի դատարանին հանձնեն ՀԱԿ-ի պատրաստած ուղերձը, որով պահանջում են հայցի բաց դատաքննություն:

Հանրահավաքի մասնակիցների ու ոստիկանության միջեւ ընդհարումներ չեղան: «Ո՛չ թանկացումներին» կարգախոսով ու պաստառներով զարդարված ամբոխը քայլեց մինչեւ Վարչական դատարան, որտեղ Լեւոն Զուրաբյանը տեղեկացրեց, որ դատարանն արդեն կնքել է ուղերձը, որը կցված է գործին:

Քանի որ ապրիլի 16-ը հայ ոստիկանի օրն է, Լ. Զուրաբյանն ու մյուս մասնակիցները երթի վերջում շնորհավորեցին ոստիկաններին:

«Ես չեմ շնորհավորում այն ոստիկաններին, ովքեր բռնությունների հեղինակ են, այլ նրանց, ովքեր օրենքի պահապանն են», ասաց ՀԱԿ-ի համակարգողը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ոչ պարենային ապրանքներն էլ հայերեն մակնշում կունենան

## *Հավանաբար 2011-ի հուլիսի 1-ից*

**Հայաստան ներմուծվող պարենային ապրանքների հայերեն մակնշման հարցը վերջապես լուծվեց, մինչդեռ ոչ պարենային ապրանքների հայերեն մակնշման հարցը դեռ մնում է չկարգավորված: Այս հարցի «Սպառողների իրավունքների պաշտպանություն» (ՍԻՊ) ՀԿ նախագահ Աբգար Եղոյանը մեր զրույցի ժամանակ տեղեկացրեց, որ անցյալ տարվա սեպտեմբերին, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորած հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի շրջանակներում, կազմակերպությունը ներկայացրել է ոչ պարենային ապրանքների մակնշման կառավարության որոշման նախագիծ:**

**Համաձայն այդ նախագծի, կազմակերպությունն առաջարկել էր վերոնշյալ ապրանքների հայերեն մակնշումն իրականացնել 2 փուլով: Առաջին խումբ ապրանքների մակնշումը սկսել 2011-ի հունվարի 1-ից, իսկ մնացածինը՝ 2011-ի հուլիսի 1-ից: Այս հարցով, Աբգար Եղոյանի տեղեկացմամբ, բանակցություններ էին վարվել էկոնոմիկայի նախարարության հետ եւ նախնական համաձայնության եկել 3 փուլով իրականացնել հայերեն մակնշումը: Սակայն, ի վերջո, էկոնոմիկայի նախարարի հետ վերջին հանդիպմանը որոշվել է հայերեն մակնշումն իրականացնել մեկ փուլով եւ, ամենայն հավանականությամբ, 2011-ի հուլիսի 1-ից:**

**Մեկնաբանելով այս որոշումը, Աբգար Եղոյանը տեղեկացրեց, որ մինչ այդ իր ղեկավարած կազմակերպությունը կզբաղվի իրազեկման աշխատանքներով, իսկ որոշման կյանքի կոչելով վերջ կդրվի սպառողների իրավունքների խախտմանը: Նա նաեւ հայտնեց, որ մեր շուկայում վաճառվող ապրանքների մինչեւ 20 տոկոսի վրա, ի թիվս այլ լեզուների, վրացերեն եւ ադրբեջաներեն մակնշում կա, իսկ հայերեն մակնշված է ոչ պարենային ապրանքների ընդամենը 10 տոկոսը: Հայերեն մակնշումը նաեւ Եվրամիության հետ մեր երկրի ինտեգրվելու անհրաժեշտ պայման է, քանի որ վերջինս խիստ կարեւորում է սպառողների իրավունքների պաշտպանության հարցը:**

**Այսպիսով, մոտ մեկ տարի հետո, 2011-ի հուլիսի 1-ից լուրջ քայլ կկատարվի սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում, եւ բոլոր ոչ պարենային ապրանքները՝ տեխնիկա, շինանյութ, քիմիական ապրանքներ, կոսմետիկա եւ այլ ապրանքներ, կունենան հայերեն մակնշում, ինչը հնարավորություն կտա հայ սպառողներին մայրենի լեզվով ծանոթանալու տվյալ ապրանքների բաղադրությանը, օգտագործման կամ կիրառման եղանակին, պահպանման կանոններին:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հնարավոր է չինական ավտոբուսների արտադրություն Հայաստանում

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության հաղորդագրությունից, նախարար Մանուկ Վարդանյանն ընդունել է Հայաստանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Թիան Ջանչունին: Հանդիպման ժամանակ դեսպանը նշել է, որ ներկայումս Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում գործում են չինական երկու հայտնի ընկերություններ, եւ հույս հայտնել, որ այս ոլորտում համագործակցությունն ավելի կզարգանա: Մանուկ Վարդանյանն էլ այն կարծիքն է հայտնել, որ բացի հեռահաղորդակցության ոլորտից, համագործակցության հնարավորություններ կան տրանսպորտի եւ ճանապարհաշինարարության բնագավառում: Մասնավորապես, նախարարը հույս է հայտնել, որ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու շինարարության իրականացման համար հայտարարվելիք միջազգային բաց մրցույթին կմասնակցեն նաեւ չինական ընկերությունները: Մանուկ Վարդանյանն ու Թիան Ջանչուն քննարկել են նաեւ Չինաստանից ավտոբուսներ եւ միկրոավտոբուսներ լիզինգով ձեռք բերելու հնարավորությունները կամ դրանց արտադրությունը Հայաստանում կազմակերպելու հարցը:

Ա. Մ.

# Դեղեր կեղծող հանցավոր խումբը ձերբակալվել է

**ՀՀ ԱԱԾ մամուլի կենտրոնից տեղեկացանք, որ ապրիլի 14-ին ՀՀ Ազգային անվտանգության ծառայության մարմինները բացահայտել են դեղամիջոցների մաքսանենգ ներկրմամբ եւ ապօրինի արտադրությամբ զբաղվող հանցավոր խումբ: ՀՀ քաղաքացի Արմեն Առաքելյանը հանցավոր համաձայնության գալով Վրաստանի Հանրապետության երկու քաղաքացիների հետ, թաքցնելով մաքսային հսկողությունից, Հայաստանի տարածք են ներկրել դեղամիջոցների մեծ խմբաքանակ: Ա. Առաքելյանի վարձակալած տանը հայտնաբերվել է ապօրինի գործող դեղագործական արտադրամաս, որտեղ առանց համապատասխան թույլտվության, չպահպանելով դեղամիջոցների արտադրության տեխնոլոգիան եւ չափանիշները, արտադրվել են տարբեր տեսակի դեղամիջոցներ, որոնք հետագայում իրացվել են Երեւանի դեղատներում:**

**Փաստի առթիվ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը հարուցել է քրեական գործ:**

**Արմեն Առաքելյանը եւ նրա հանցակիցները ձերբակալված են:**

Մ. Մ.

**Արմենական-Ռամկավար ազատական կուսակցություն «Զապել Եսայան» ակումբ**

Սիրով հրավիրում ենք

**«Սվազլյան գերդաստանի հավատամքը»**

ֆիլմի ցուցադրությանն ու շնորհանդեսին, որը տեղի կունենա Թեքեյան կենտրոնում, ս.թ. **ապրիլի 21-ին, ժամը 18-ին:**
Հասցեն՝ Խանջյան 50:
Սցենարի հեղինակ եւ ռեժիսոր՝ **Լաուրա Մինասյան**
Պրոդյուսեր եւ երաժշտական ձեւավորող՝ **Կարեն Խառատյան**
Կարդում է Հայաստանի վաստակավոր արտիստ **Սարգիս Նաջարյանը**

# Խարդախության սխեմաներ էլեկտրոնային փոստի կամ բջջային sms-ների միջոցով

Վերջին շրջանում հաճախակիացել են դեպքերը, երբ քաղաքացիներին էլեկտրոնային փոստով (e-mail) կամ բջջային հեռախոսակապի տեքստային հաղորդագրությունների միջոցով (SMS) կատարվում են առաջին հայացքից խիստ գրավիչ առաջարկներ, որոնք իրականում իրենցից ներկայացնում են աշխարհում բավականին լայն տարածում գտած խարդախության սխեմաների բաղկացուցիչ մասեր: Այդ առաջարկները պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի.

**1. Գերազանց պայմաններ**

Քաղաքացիներին առաջարկվում են չափազանց գրավիչ պայմաններով որոշակի գործարքներ (գնումներ, ներդրումներ եւ այլն): Մասնավորապես, առաջարկվում է. ա) կատարել ներդրումներ ինչ-որ օտարերկրյա ընկերության արժեթղթերում, որոնց եկամտաբերությունը կազմում է տարեկան 100 տոկոս, բ) սիմվոլիկ կամ փոքր գումարով ձեռք բերել արժեքավոր իր, գ) որոշակի գումարի դիմաց ձեռք բերել յուրահատուկ ապրանքներ, որոնք հնարավոր է ձեռք բերել բացառապես առաջարկվող տարբերակով (էլեկտրոնային փոխանցման միջոցով), ընդ որում նշվում է, որ ապրանքների իրական արժեքը մի քանի անգամ բարձր է առաջարկվող գնից:

**2. Աջակցություն**

Քաղաքացիներին առաջարկվում է ինչ-ինչ գործարար նախաձեռնությունների շրջանակում ցուցաբերել որոշակի աջակցություն՝ շռայլ վարձատրության դիմաց: Մասնավորապես, առաջարկվում է. ա) բանկերից մեկում բացել բանկային հաշիվ, այնուհետեւ դրամական արագ փոխանցումների որեւէ համակարգով ստանալ միջոցներ, մուտքագրել այդ միջոցները բացված բանկային հաշվին եւ փոխանցել նախանշված ուղղությամբ, բ) գրանցել իրավաբանական անձ եւ համաձայն ստացված ցուցումների որոշակի անձանց հետ մտնել իրավապայմանագրային հարաբերությունների մեջ (կնքել առուվաճառքի շինծու պայմանագրեր, տրամադրել հաշիվ-ապրանքագրեր եւ այլն): Ընդ որում, «ա» եւ «բ» տարբերակները երբեմն առաջարկվում են համակցության մեջ (երկրորդը հաջորդում է առաջինին):

**3. Ժառանգություն կամ շահում**

Քաղաքացիները տեղեկացվում են, որ ստացել են ժառանգություն կամ շահել են խոշոր գումար, որոնց ձեւակերպման եւ հետագա տնօրինման համար անհրաժեշտ է վճարել որոշակի գումար: Ընդ որում, եթե խարդախները լավ տեղեկացված են, հնարավոր է, որ նամակը կամ հաղորդագրությունը ստացվի անվանական՝ արտասահմանում բնակվող ինչ-որ ծանոթի կամ բարեկամի անունից:

**4. Աշխատանք տանը**

Քաղաքացիներին առաջարկվում է վաստակել գումարներ առանց տնից դուրս գալու, մասնավորապես՝ փոստով ուղարկել անձնագրի վավերացված պատճենները եւ ժամանակ առ ժամանակ ստորագրել որոշակի փաստաթղթեր եւ դրանք տալ նոտարական վավերացման:

Ընդ որում վերոնկարագրյալ բոլոր տարբերակներում առաջին իսկ հաղորդագրությամբ կամ հետագայում քաղաքացիներից պահանջվում է ուղարկել որոշակի գումար, իբր «կազմակերպչական» ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար:

ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը զգուշացնում է, որ վերոնկարագրյալ պատահական առաջարկներն իրենցից ներկայացնում են մարդկանց վստահություն չարաշահելու միջոցով խարդախության ճանապարհով գումար վաստակելու միջոց, որում ներքաշված դյուրահավատ անձինք ի վերջո կարող են կրել լուրջ ֆինանսական վնասներ: Նմանատիպ խարդախություններ կատարվում են մի շարք երկրներում, ինչի «զոհ» են դառնում բազմաթիվ քաղաքացիներ:

ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը քաղաքացիներին հորդորում է ձեռնպահ մնալ նմանօրինակ հաղորդագրություններին որեւէ կերպ արձագանքելուց եւ նկարագրված սխեմաների մասին որեւէ էական տեղեկատվություն ունենալու, այդ թվում՝ դրանց մեջ ՀՀ որեւէ քաղաքացու կամ իրավաբանական անձի ներգրավվածության դեպքում տեղեկացնել՝ 54-50-88 կամ 56-16-01 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն info–fiu@cba.am էլեկտրոնային փոստին (տեղեկությունների գաղտնիությունը երաշխավորվում է):

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**Մրցույթի հրավեր 091/10/PRO**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ ճամփորդական ծառայությունների մատուցման համար:

Մրցույթի հրավերին մանրամասն կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից՝ Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. ապրիլի 30, ժամը 17:00:

**Հայտարարություն**

Սույն թվականի ապրիլի 23-ին, ժամը 12:00 ին տեղի կունենա ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքում նախատեսվող «**ՆԻԿԱ-ԿԱՏՐԻՆ-ՍԵՐՎԻՍ**» **ՍՊԸ-ի** ԱԳԼճ կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

**Կորել է**

**Արտաշ Աշոտի Չոբանյանի** կրծքանշանը՝ ARG-0245, տրված «Հայռուսգազարդ» ՓԲԸ Երեւանի ԳԳՄ-ի կողմից:
Համարել անվավեր:

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 16.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: